Հելսինկյան Քաղաքացիական Ասամբլեայի

Վանաձորի գրասենյակ

2013 թ. ՀՀ նախագահական ընտրությունների դիտորդական առաքելության զեկույց

ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԵԱՆԵԱԿԱՆ ԱՐԴՅՈՒՆՔԵՐԸ		
ԲԱԳՐԱՏՅԱՆ ՀՐԱՆՏ ԱՐԱՐԱՏԻ	31 643	2.15%
ՀԱՅՐԻԿՅԱՆ ՊԱՐՈՒՅՐ ԱՐՇԱՎԻՐԻ	18 093	1.23%
ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ ՐԱՖՖԻ Կ. ՌԻՋԱՐԴԻ	539 672	36.75%
ՂՈՒԿԱՍՅԱՆ ԱՆԴՐԻԱՍ ՄԱՐԱՏԻ	8 328	0.57%
ՄԵԼԻՔՅԱՆ ԱՐՄԱՆ ՎԱՀԱՆԻ	3 516	0.24%
ՍԱՐԳՍՅԱՆ ՍԵՐԺ ԱԶԱՏԻ	861 160	58.64%
ՍԵԴՐԱԿՅԱՆ ՎԱՀԱՆ ԺՈՐԺԻԿԻ	6 203	0.42%
ՄՇԱԿՎԱԾ ՏԵՂԱՄԱՍԵՐԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԹԻՎԸ		1 988

Վանաձոր 2013 թ.

Հելսինկյան Քաղաքացիական Ասամբլեայի

Վանաձորի գրասենյակ

2013 թ. ՀՀ նախագահական ընտրությունների դիտորդական առաքելության զեկույց

OPEN SOCIETY INSTITUTE ASSISTANCE FOUNDATION - ARMENIAN BRANCH

NORWEGIAN HELSINKI COMMITTEE

Դիտորդական առաքելությունը և սույն տպագրությունը իրականացվել են Քաունթերփարթ ինթերնեշնլ Հայաստանի ԱՄՆՄԶԳ միջոցով, Բաց հասարակության հիմնադրամներ - Հայաստանի և Նորվեգիայի Հելսինկյան կոմիտեի ֆինանսական աջակցությամբ:

Սույն զեկույցի մեջ արտահայտված տեսակետները, մեկնաբանություններն ու եզրակացությունները հեղինակներինն են և հնարավոր է, որ չհամապատասխանեն ֆինանսավորող կազմակերպությունների տեսակետներին:

Բովանդակություն

Բովանդակություն 7
Նախաբան 9
Օրենսդրական համատեքստ 12
ՀՀ Ընտրական օրենսգրքի խախտումներ 12
Քաղաքական համատեքստ 19
Քարոզարշավի դիտարկման արդյունքներ 20
Նախընտրական քարոզչության դիտարկման ամփոփում 20
Նախընտրական հանդիպումներ 21
Վարչական ռեսուրսների անբարեխիղճ օգտագործում 24
Բարեգործություն, քողարկված ընտրակաշառք 26
Նախընտրական շտաբներ 27
Քարոզչանյութեր 28
Ընտրացուցակներ 29
Քվեարկության օրվա դիտարկում 30
Քվեարկության ընթացքի դիտարկում ընտրատեղամասի ներսում 30
Քվեարկության օրվա դիտարկում տեղամասի շրջակայքում 42
Ձայների հաշվարկի գործընթացի դիտարկում 45
Քվեարկության արդյունքների վերլուծություն 48
Արձանագրված խախտումների առնչությամբ իրականացված գործողություններ 57
Երկարաժամկետ դիտորդության ընթացքում արձանագրված խախտումների առնչությամբ իրականացված գործողություններ 57
ՀՀ նախագահական ընտրությունների քվեարկության օրը հայտնաբերված խախտումների վերաբերյալ իրականացված գործողություններ: 61
Մեթոդաբանություն 66

Նախաբան

2013 թ. փետրվարի 18-ի ՀՀ նախագահական ընտրությունների ընթացքում ՀՔԱ Վանաձորի գրասենյակն իրականացրել է երկարաժամկետ և կարճաժամկետ դիտորդություն Լոռու և Տավուշի մարզերում:

Դիտարկումների ընթացքում արձանագրվել են բազմաթիվ խախտումներ, թե նախընտրական քարոզչության, թե քվեարկության օրը, որոնք մեր դիտարկումներով՝ էական ազդեցություն են ունեցել քվեարկության և ընդհանուր առմամբ ընտրությունների արդյունքի վրա:

2013 թվականի հունվարի 21-ից փետրվարի 16-ն ընկած ժամանակահատվածում կազմակերպության կողմից իրականացված նախընտրական քարոզչության ուսումնասիրությամբ արձանագրվել են մի շարք փաստեր.

- նախընտրական քարոզչության ընթացքում Վանաձորում և Իջևանում գործել են միայն նախագահի թեկնածուներ Սերժ Սարգսյանի և Ռաֆֆի Հովհաննիսյանի նախընտրական շտաբները
- ՀՀ նախագահի թեկնածու Սերժ Սարգսյանը, ով Հանրապետության գործող նախագահն է, իր նախընտրական քարոզչության ընթացքում օգտագործել է քարոզչության օրենքով արգելված միջոցներ, մասնավորապես վարչական լծակների օգտագործմամբ ապահովել է իր նախընտրական հանդիպումներին քաղաքացիների պարտադիր մասնակցությունը, պետական կամ տեղական ինքնակառավարման մարմինների զբաղեցրած շենքերում տեղակայել է իր նախընտրական շտաբները և այլն: Այս ամենը կարելի է որակել որպես վարչական ռեսուրսների օգտագործում, որը հասանելի չէ այլ թեկնածուների համար և որը խախտում է թեկնածուների կողմից հավասար հնարավորությունների օգտագործման սկզբունքը
- նախագահի թեկնածու Սերժ Սարգսյանի օգտին քվեարկելու համար, ըստ քաղաքացիներից ստացված ահազանգերի, բաժանվել են որոշակի դրամական միջոցներ, ինչը կարելի է որակել որպես քրեական օրենսգրքով արգելված արարք՝ ընտրողի կամքի ազատ իրականացման խոչընդոտում /հոդված 154[2]/:
- այս ընտրությունների ընթացքում ևս նկատվել են օրենքով արգելված վայրերում նախագահի թեկնածուների նախընտրական պաստառների փակցնելու դեպքեր:

Նման իրավիճակը կրկին վկայում է, որ այս անգամ ևս նախընտրական քարոզչությունն իրականացվել է օրենսդրության սահմանված կարգի խախտումներով, ինչը նախադրյալներ է ստեղծում գաղտնի քվերակությամբ ընդհանուր, հավասար և ուղղակի ընտրական իրավունքի հիման վրա ընտրությունների անցկացմանը:

Քվեարկության օրը տեղամասային ընտրական հանձնաժողովները հիմնականում դրսևորել են միատեսակ վարքագիծ, չնայած նրանց ըստ կուսակցական պատկանելության

բազմազանության, առանձին տեղամասերում վստահված անձինքն են հանդիսացել տեղական ինքնակառավարման, պետական կառավարման մարմինների աշխատակիցներ

Քվեարկության օրը ՀՔԱ Վանաձորի գրասենյակի կողմից արձանագրվել են՝

- Ընտրակաշառքի բաժանման դեպքեր
- Լցոնումներ
- Քվեարկության գաղտնիության խախտումներ
- Ընտրողների ազատ կամքի արտահայտմանը խոչընդոտելու/ընտրողների ուղղորդման դեպքեր
- Ընտրական տեղամասում գտնվելու իրավունք չունեցող անձանց ներկայություն
- Ընտրատեղամասում դիտորդի ազատ տեղաշարժմանը խոչընդոտում
- Քարոզչություն ընտրատեղամասում
- Ճնշումներ ընտրատեղամասում
- Կուտակումներ տեղամասում
- Քվեարկության կարգի խախտումներ
- Հանձնաժողովների նախագահների և անդամների խախտումների կանխարգելմանն ուղղված գործողությունների բացակայություն
- Իրավապահ մարմինների կողմից խախտումների ահազանգերի վերաբերյալ կանխամտածված անգործություն
- Քվեարկության արդյունքների կեղծում և քվեաթերթիկների դիտավորյալ անվավերացում

Այսպիսով կարճաժամկետ դիտորդության արդյունքների հիման վրա եզրակացնում ենք, որ 2013 թ. փետրվարի 18-ի ՀՀ նախագահի ընտրությունների քվեարկության փուլն ընթացել է բազմաթիվ բացահայտ խախտումներով, որոնք էական ազդեցություն է ունեցել ընտրության արդյունքների վրա և գտնում ենք, որ այս քվեարկությունը չի համապատասխանում ազատ և արդար ընտրությունների չափանիշներին:

2013 թ. փետրվարի 18-ի նախագահական ընտրությունների ընթացքում Կենտրոնական ընտրական հանձնաժողովը, ընտրատարածքային ընտրական հանձանաժողովները, ՀՀ ոստիկանությունը և ՀՀ դատախազությունը ստացել են ընդհանուր առմամբ 104 դիմում-բողոքներ, որոնք վերաբերել են մի շարք խախտումների, շատ ավելի մեծ թիվ են կազմել լրատվամիջոցներով և սոցիալական ցանցերով տարածված ահազանգերը, որոնց մի մասը նույնպես դիտվել են որպես հաղորդում: Այս բողոքների գերակշռող մեծամասնության վերաբերյալ մերժման որոշում է կայացվել՝ դրանք անհիմն համարելու պատճառաբանությամբ: Սակայն ակնհայտ է, որ դիմում-բողոքների այս մեծաքանակությունը և տարբեր տեղամասերից նույնատիպ խախտումների մասին ահազանգող բազմաթիվ բողոքների առկայությունը ինքնին խոսում է դրանցում ներկայացված խախտումների համատարածության մասին, իսկ այս խնդիրների գերակշռող մեծամասնության հապճեպ, անհարկի և անհիմն ժխտումը պատկան մարմինների կողմից, նրանց կանխամտածված անգործության և կանխակալ վերաբերմունքի հստակ ապացույց է հանդիսանում:

2013 թ. փետրվարի 18-ի ՀՀ նախագահական ընտրությունների թե՛ նախընտրական քարոզչության, և թե՛ քվեարկության օրվա վերաբերյալ կազմակերպության դիտորդներն

արձանագրել են բազմաթիվ խախտումներ, մտահոգություններ, որոնց վերաբերյալ տարածվել են հայտարարություններ և հաշվետվություններ՝ ԶԼՄ-ների և կազմակերպության կայքէջի միջոցով:

Տեղեկատվության մեծ մասը վերաբերել է ընտրակաշառքների վերաբերյալ ահազանգերին, վարչական ռեսուրսների չարաշահմանը, տեղական հեղինակությունների կողմից ընտրական տեղամասերի շրջակայքում իրավիճակը կառավարելու և քաղաքացիների վարքագիծը ենթարկեցնելու դեպքերին, քաղաքացիների ազատ կամքի վրա ճնշումներին, որոնք արտահայտվել են քաղաքացիների պարտադրված մասնակցությամբ թե՛ նախընտրական հանդիպումներին և թե՛ քվեարկությանը, որոնց արդյունքում ձևավորվել է վախի, անվստահության և անազատության մթնոլորտ:

Չնայած իրավիճակի վերաբերյալ բազմաթիվ ահազանգերին, արձանագրում ենք, որ

1. ոստիկանության, ազգային անվտանգության և դատախազության մարմինների կողմից սեփական նապաստեռնությամբ որևէ դեպք չի բացահայտվել,

2. ԶԼՄ-ներով հրապարակված խախտումների վերաբերյալ արձագանքները եղել են խիստ ընտրողական և միտված են եղել միայն արձանագրված խախտումների հերքմանը

3. ընտրական գործընթացների բնականոն ընթացքը խաթարողները դրսևորել են ակնհայտ ցինիկ վարքագիծ, ինչը վկայում է նրանց տրված անպատժելիության երաշխիքների մասին

Նման իրավիճակի ամբողջ պատասխանատվությունն ընկնում է իրավապահ մարմինների վրա, որոնք այդպես էլ չիրականացրեցին ՀՀ օրենսդրությամբ և սահմանադրությամբ սահմանված իրենց պատավորությունները՝ կանխարգելելու ընտրական խախտումները, բացահայտելու կատարված ընտրախախտումները և պատասխանատվության ենթարկելու մեղավորներին:

Կրկին անգամ նման կանխամտածված անգործության հետևանքով ամրապնդվեց ընտրողների անվստահությունը ընտրական ինստիտուտի և ընտրությունների միջոցով իշխանություն ձևավորելու հնարավորության նկատմամբ:

Համադրելով նախընտրական քարոզչության, քվեարկության օրվա և քվեարկության արդյունքների ուսումնասիրությունը Հելսինկյան Քաղաքացիական Ասամբլեայի Վանաձորի գրասենյակն արձանագրում է, որ 2013 թ. փետրվարի 18-ի նախագահական ընտրությունների արդյունքը կեղծված է և չի արտահայտում ՀՀ քաղաքացիների իրական կամքը, ինչը որևէ նախադրյալներ չի ստեղծում երկրի բնականոն, ժողովրդավարական զրագացման համար:

Օրենսդրական համատեքստ

2013 թ. նախագահական ընտրությունների համար օրենսդրական հիմք է հանդիսացել 2011 թ. ընդունված ՀՀ ընտրական օրենսգիրքը, որը բացառիկ է օրենքի անպատիժ խախտման լայն հնարավորությունների ընձեռնման տեսանկյունից, քանի որ ըստ էության արհեստականորեն սահմանափակում է խախտումների վերաբերյալ ահազանգելու հնարավորությունը և գրանցված ահազանգերի պատշաճ և օբյեկտիվ քննությունը:

Հելսինկյան Քաղաքացիական Ասամբլեայի Վանաձորի գրասենյակը բազմիցս անդրադարձել է ՀՀ ընտրական օրենսգրքի բացթողումներին և հանդես եկել դրանց վերացմանն ուղղված առաջարկություններով[1], սակայն ակնհայտ է, որ սույն բացթողումներն ունեն մեկ դիտավորություն՝ ապահովելու իշխանության սահուն վերարտադրությունը և հնարավորինս սահմանափակելու հակազդեցության ու բողոքարկման հնարավորությունները:

ՀՀ Ընտրական օրենսգրքի խախտումներ

Նախընտրական քարոզչության ընթացքում

1. ***Խախտումը*** - ՀՀ նախագահի թեկնածու Սերժ Սարգսյանը, ով Հանրապետության գործող նախագահն է, իր նախընտրական քարոզչության ընթացքում օգտագործել է քարոզչության օրենքով արգելված միջոցներ, մասնավորապես վարչական լծակների օգտագործմամբ ապահովել է իր նախընտրական հանդիպումներին քաղաքացիների պարտադիր մասնակցությունը, պետական կամ տեղական ինքնակառավարման մարմինների զբաղեցրած շենքերում տեղակայել է իր նախընտրական շտաբները և այլն: Այս ամենը կարելի է որակել որպես վարչական ռեսուրսների օգտագործում, որը հասանելի չէ այլ թեկնածուների համար և որը խախտում է թեկնածուների կողմից հավասար հնարավորությունների օգտագործման սկզբունքը

Օրենսդրական կարգավորում- ՀՀ ընտրական օրենսգրքի 18-րդ հոդվածի 6-րդ մասի համաձայն՝ արգելվում է նախընտրական քարոզչություն կատարել և ցանկացած բնույթի քարոզչական նյութ տարածել՝ պետական և տեղական ինքնակառավարման մարմիններին, ինչպես նաև պետական և համայնքային ծառայողներին, ուսումնական հաստատությունների մանկավարժական կազմի աշխատողներին՝ իրենց լիազորություններն իրականացնելիս.

Նույն հոդվածի 5-րդ մասի համաձայն՝ ....ընտրական շտաբները չեն կարող տեղակայվել պետական և տեղական ինքնակառավարման մարմինների զբաղեցրած շենքերում

[1] http://hcav.am/wp-content/uploads/2012/06/Election-obsevration-report-06.05.2012.pdf

(բացառությամբ այն դեպքերի, երբ շտաբները զբաղեցնում են այդ մարմիններին չպատկանող տարածք), ինչպես նաև այն շենքերում, որտեղ գործում են ընտրական հանձնաժողովները:

2. ***խախտումը***- նախագահի թեկնածու Սերժ Սարգսյանի օգտին քվեարկելու համար, ըստ քաղաքացիներից ստացված ահազանգերի, բաժանվել են որոշակի դրամական միջոցներ:

Օրենսդրական կարգավորում- ՀՀ ընտրական օրենսգրքի 18-րդ հոդվածի 7-րդ մասի համաձայն՝ նախընտրական քարոզչության ժամանակ, ինչպես նաև քվեարկության նախորդ և քվեարկության օրը թեկնածուներին, կուսակցություններին, կուսակցությունների դաշինքներին արգելվում է անձամբ կամ նրանց անունից կամ որևէ այլ եղանակով ընտրողներին անհատույց կամ արտոնյալ պայմաններով տալ (խոստանալ) դրամ, սննդամթերք, արժեթղթեր, ապրանքներ կամ մատուցել (խոստանալ) ծառայություններ:

ՀՀ քեռական դատավարության օրենսգրքի 154[2] –րդ հոդվածի համաձայն՝ Թեկնածուներից որևէ մեկի օգտին կողմ կամ դեմ քվեարկելու, ընտրություններին մասնակցելու կամ ընտրություններին մասնակցելուց հրաժարվելու պայմանով թեկնածուներից անձամբ կամ միջնորդի միջոցով կաշառք ստանալը:

3. ***Խախտումը***- այս ընտրությունների ընթացքում ևս նկատվել են օրենքով արգելված վայրերում նախագահի թեկնածուների նախընտրական պաստառների փակցնելու դեպքեր:

Օրենսդրական կարգավորում- ՀՀ ընտրական օրենսգրքի 20-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝… Արգելվում է քարոզչական պաստառներ փակցնելը պետական կամ տեղական ինքնակառավարման մարմինների զբաղեցրած շենքերի, հասարակական սննդի, առևտրի օբյեկտների և հասարակական տրանսպորտի վրա կամ ներսում՝ անկախ սեփականության ձևից:

Քվեարկության օրը

1. ***խախտումը***- Ընտրակաշառքի բաժանման դեպքեր

Օրենսդրական կարգավորում- ՀՀ ընտրական օրենսգրքի 18-րդ հոդվածի 7-րդ մասի համաձայն՝ նախընտրական քարոզչության ժամանակ, ինչպես նաև քվեարկության նախորդ և քվեարկության օրը թեկնածուներին, կուսակցություններին, կուսակցությունների դաշինքներին արգելվում է անձամբ կամ նրանց անունից կամ որևէ այլ եղանակով ընտրողներին անհատույց կամ արտոնյալ պայմաններով տալ (խոստանալ) դրամ, սննդամթերք, արժեթղթեր, ապրանքներ կամ մատուցել (խոստանալ) ծառայություններ:

ՀՀ քեռական օրենսգրքի 154[2] –րդ հոդվածի համաձայն՝ Թեկնածուներից որևէ մեկի օգտին կողմ կամ դեմ քվեարկելու, ընտրություններին մասնակցելու կամ ընտրություններին մասնակցելուց հրաժարվելու պայմանով թեկնածուներից անձամբ կամ միջնորդի միջոցով կաշառք ստանալը:

2. *խախտումը*-Լցոնումներ

Օրենսդրական կարգավորում- 1) Քվեաթերթիկում ընտրողը կենտրոնական ընտրական հանձնաժողովի սահմանած ձևով միատեսակ նշում է կատարում այն թեկնածուի անվան, կուսակցության (կուսակցությունների դաշինքի) անվանման դիմացի քառանկյունում, ում կողմ է քվեարկում:

2) Մեկ թեկնածու քվեարկվելու դեպքում ընտրողը, եթե կողմ է քվեարկելու, նշում է կատարում «կողմ եմ» բառերի, եթե դեմ՝ «դեմ եմ» բառերի դիմաց:

3) Քվեաթերթիկում քվեարկության մասին նշում կատարելուց հետո ընտրողը քվեարկության խցիկում քվեաթերթիկը ծալում է, տեղավորում քվեարկության ծրարի մեջ և մոտենում քվեատուփին: Միաժամանակ մի քանի քվեարկություն անցկացվելու դեպքում ընտրողը յուրաքանչյուր քվեաթերթիկ տեղավորում է համապատասխան ծրարում:

4) Քվեարկության ծրարը կնքող և քվեատուփի համար պատասխանատու անդամը քվեարկության ծրարը կնքում և քվեարկության ծրարը քվեատուփի մեջ գցելու հնարավորություն է ընձեռում միայն ընտրողի անձը հաստատող փաստաթղթում տվյալ ընտրությանը մասնակցելու վերաբերյալ դրոշմակնիքի բացակայությունը ստուգելուց և դրա բացակայության դեպքում անձը հաստատող փաստաթուղթը դրոշմակնքելուց հետո: Եթե ընտրողի անձը հաստատող փաստաթղթում առկա է տվյալ ընտրությանը մասնակցելու մասին դրոշմակնիք, ապա հանձնաժողովի անդամը հանձնաժողովի նախագահի միջոցով տեղեկացնում է հերթապահող ոստիկաններին հանցագործության փորձի մասին, հանում է քվեաթերթիկը քվեարկության ծրարից, ծրարը վերադարձնում քվեաթերթիկ և քվեարկության ծրար հատկացնող հանձնաժողովի անդամին, իսկ քվեաթերթիկին ամրացնելով քվեաթերթիկի ցանկացած մեկ ելունդ՝ կենտրոնական ընտրական հանձնաժողովի սահմանած կարգով անհապաղ մարում է: Քվեարկության ծրարը կնքող և քվեատուփի համար պատասխանատու հանձնաժողովի անդամն իր նախաձեռնությամբ կամ հանձնաժողովի այլ անդամի կամ վստահված անձի պահանջով կարող է ստուգել (հանձնաժողովի այլ անդամին կամ վստահված անձին ներկայացնել) ընտրողի անձը հաստատող փաստաթուղթը:

Քվեարկության ծրարը կնքող և քվեատուփի համար պատասխանատու հանձնաժողովի անդամը կնքում է քվեարկության ծրարը, բացում է քվեատուփի ճեղքը և ընտրողին հնարավորություն է ընձեռում քվեարկության ծրարը քվեատուփի մեջ գցելու համար: Քվեարկության ծրարը կնքվում է տեղամասային ընտրական հանձնաժողովի կնիքով: Այս կնիքը քվեարկության ողջ ընթացքում պետք է գտնվի քվեատուփի մոտ՝ բոլորի համար տեսանելի տեղում:

5) Անձը հաստատող փաստաթղթի դրոշմակնքման համար տեղամասային ընտրական հանձնաժողովներին հատկացվում է այնպիսի նյութ, որն օգտագործելուց հետո առնվազն 12 ժամ պահպանվում է, իսկ հետո՝ անհետանում:

6) Եթե հանձնաժողովի անդամը կամ վստահված անձը գտնում է, որ քվեարկության ընթացքում տեղի է ունեցել սույն օրենսգրքով նախատեսված քվեարկության կարգի խախտում, ապա իրավունք ունի պահանջելու, որ իր գնահատականը արձանագրվի գրանցամատյանում:

3. ***Խախտումը***- Քվեարկության գաղտնիության խախտումներ

Օրենսդրական կարգավորում- ՀՀ ընտրական օրենսգրքի 5-րդ հոդվածի համաձայն՝ քվեարկությունը գաղտնի է: Ընտրողի համար քվեարկության գաղտնիությունը ոչ միայն իրավունք է, այլև պարտականություն: Քվեարկողի կամքի ազատ արտահայտման նկատմամբ վերահսկողությունն արգելվում է:

ՀՀ ընտրական օր. 65-րդ հոդվածի 3 մասի համաձայն՝ ընտրողը քվեաթերթիկը լրացնում է գաղտնի՝ քվեարկության խցիկում: Արգելվում է որևէ ձևով տեղեկանալ, թե ընտրողն ինչպես է քվեարկում:

ՀՀ ընտրական օր. 65-րդ հոդվածի 7 մասի համաձայն՝ Տեղամասային կենտրոնում արգելվում է կատարած քվեարկության մասին տեղեկություններ հայտնելը:

ՀՀ քրեական օրենսգրքի 154-րդ հոդվածի համաձայն՝ քվեարկության գաղտնիությունը խախտելու նպատակով ընտրողին քվեարկության արդյունքը հայտնելուն հարկադրելը, քվեարկության արդյունքը բացահայտելու նպատակով քվեարկած քվեաթերթիկը ստուգելը, քվեարկության խցիկ (սենյակ) մուտք գործելը, ինչպես նաև քվեարկության գաղտնիությունն այլ կերպ խախտելը:

4. ***Խախտումը***-ընտրողների ազատ կամքի արտահայտմանը խոչընդոտելու /ընտրողների ուղղորդման, ճնշումների, դեպքեր/

Օրենսդրական կարգավորում-ՀՀ ընտրական օրենսգրքի 5-րդ հոդվածի համաձայն՝…քվեարկողի կամքի ազատ արտահայտման նկատմամբ վերահսկողությունն արգելվում է:

ՀՀ քեական օրենսգրքի 154[2] –րդ հոդվածի համաձայն՝ թեկնածուներից որևէ մեկի օգտին կողմ կամ դեմ քվեարկելու, ընտրություններին մասնակցելու կամ ընտրություններին մասնակցելուց հրաժարվելու պայմանով թեկնածուներից անձամբ կամ միջնորդի միջոցով կաշառք ստանալը:

5. ***Խախտումը*** Ընտրական տեղամասում գտնվելու իրավունք չունեցող անձանց ներկայություն

Օրենսդրական կարգավորում-ՀՀ ընտրական օրենսգրքի 33-րդ հոդվածի 3-րդ կետի համաձայն՝ ընտրական հանձնաժողովի նիստին և քվեարկության ընթացքում քվեարկության սենյակում կարող է ներկա լինել յուրաքանչյուր թեկնածուի և համամասնական ընտրակարգով ընտրություններին մասնակցող յուրաքանչյուր կուսակցության, կուսակցությունների դաշինքի մեկական վստահված անձ:

ՀՀ ընտրական օրենսգրքի 6-րդ հոդվածի 12 մասի համաձայն՝ ընտրական հանձնաժողովների նիստերին, ինչպես նաև քվեարկության ամբողջ ընթացքում տեղամասային կենտրոնում սույն օրենսգրքով սահմանված կարգով իրավունք ունեն ներկա լինելու վստահված անձինք, դիտորդները, զանգվածային լրատվության միջոցների ներկայացուցիչները, ինչպես նաև վերադաս ընտրական հանձնաժողովի անդամները՝ վերադաս հանձնաժողովի նախագահի համաձայնությամբ կամ հանձնարարությամբ: Ընտրական հանձնաժողովների նիստերը, ինչպես նաև քվեարկության ընթացքը

վստահված անձինք, դիտորդները, զանգվածային լրատվության միջոցների ներկայացուցիչները կարող են լուսանկարահանել, տեսանկարահանել՝ չխախտելով ընտրողների քվեարկության գաղտնիության իրավունքը:

6. ***Խախտումը***- Ընտրատեղամասում դիտորդի ազատ տեղաշարժմանը խոչընդոտում

Օրենսդրական կարգավորում – ՀՀ ընտրական օրենսգրքի 31-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետի համաձայն՝ դիտորդը, զանգվածային լրատվության միջոցի ներկայացուցիչն իրավունք ունեն: նույն հոդվածի 4-րդ մասի համաձայն՝ իտորդի, զանգվածային լրատվության միջոցի ներկայացուցչի՝ սույն օրենսգրքով սահմանված իրավունքների որևէ սահմանափակում չի թույլատրվում:

7. ***Խախտումը*** -Քարոզչություն ընտրատեղամասում

Օրենսդրական կարգավորում- ՀՀ ընտրական օրենսգրքի 18-րդ հոդվածի 7-րդ մասի համաձայն՝ Նախընտրական քարոզչության ժամանակ, ինչպես նաև քվեարկության նախորդ և քվեարկության օրը թեկնածուներին, կուսակցություններին, կուսակցությունների դաշինքներին արգելվում է անձամբ կամ նրանց անունից կամ որևէ այլ եղանակով ընտրողներին անհատույց կամ արտոնյալ պայմաններով տալ (խոստանալ) դրամ, սննդամթերք, արժեթղթեր, ապրանքներ կամ մատուցել (խոստանալ) ծառայություններ: Այն բարեգործական կազմակերպությունները, որոնց անվանումները կարող են նմանեցվել (ասոցացվել) կուսակցությունների, կուսակցությունների դաշինքների անվանումներին, թեկնածուների անուններին, նախընտրական քարոզչության ժամանակ բարեգործություն չեն կարող իրականացնել այն համայնքներում, որտեղ անցկացվում են ընտրություններ, որոնց մասնակցում են այդ թեկնածուները, կուսակցությունները, կուսակցությունների դաշինքները կամ նրանց առաջադրած թեկնածուները:

8. ***Խախտումը*** - Կուտակումներ տեղամասում

Օրենսդրական կարգավորում-ՀՀ ընտրական օրենսգրքի 63-րդ հոդվածի 6-րդ մասի համաձայն՝ Քվեարկության սենյակում միաժամանակ չի կարող գտնվել 15-ից ավելի քվեարկող:

9. ***Խախտումը***- Քվեարկության կարգի խախտումներ

Օրենսդրական կարգավորում- 1) Քվեարկության ժամանակ յուրաքանչյուր ընտրող ստանում է քվեարկության մեկ քվեաթերթիկ (քվեաթերթիկներ՝ միաժամանակ մի քանի քվեարկություն անցկացվելու դեպքում) և մեկ քվեարկության ծրար (ծրարներ՝ միաժամանակ մի քանի քվեարկություն անցկացվելու դեպքում):

2) Գրանցվելուց անմիջապես հետո ընտրողը մոտենում է հանձնաժողովի՝ քվեաթերթիկների և քվեարկության ծրարների տրամադրման համար պատասխանատու անդամին: Վերջինս անջատում է քվեաթերթիկի (քվեաթերթիկների՝ միաժամանակ մի քանի քվեարկություն անցկացվելու դեպքում) ելունդը և քվեաթերթիկի ներքևի հատվածը քվեարկության ծրարի հետ հանձնում է ընտրողին: Ընտրողն անցնում է քվեարկության խցիկ՝ քվեարկելու:

3) Ընտրողը քվեաթերթիկը լրացնում է գաղտնի՝ քվեարկության խցիկում: Արգելվում է որևէ ձևով տեղեկանալ, թե ընտրողն ինչպես է քվեարկում:

4) Քվեաթերթիկն ինքնուրույն լրացնելու հնարավորություն չունեցող ընտրողն իրավունք ունի հանձնաժողովի նախագահին տեղեկացնելուց հետո քվեարկության խցիկ հրավիրելու այլ անձի, որը չպետք է լինի ընտրական հանձնաժողովի անդամ, վստահված անձ: Անձն իրավունք ունի օգնելու քվեաթերթիկն ինքնուրույն լրացնելու հնարավորություն չունեցող միայն մեկ ընտրողի: Բացի նշված դեպքից, քվեաթերթիկը լրացնելիս քվեարկության խցիկում այլ անձի ներկայությունն արգելվում է: Քվեաթերթիկն ինքնուրույն լրացնելու հնարավորություն չունեցող ընտրողին օգնող անձի տվյալները գրառվում են տեղամասային ընտրական հանձնաժողովի գրանցամատյանում:

5) Եթե ընտրողը կարծում է, որ քվեաթերթիկը սխալ է լրացրել կամ վնասել է, ապա կարող է դիմել հանձնաժողովի նախագահին՝ նոր քվեաթերթիկ ստանալու համար: Հանձնաժողովի նախագահի հանձնարարությամբ ընտրողին հատկացվում է նոր քվեաթերթիկ, ընտրողների ցուցակում կատարվում է համապատասխան նշում տվյալ ընտրողի անվան, ազգանվան դիմաց: Սխալ լրացված (վնասված) քվեաթերթիկին ամրացվում է քվեաթերթիկի ցանկացած մեկ ելունդ, և քվեաթերթիկն անհապաղ մարվում է:

6) Հանձնաժողովի՝ քվեաթերթիկների և քվեարկության ծրարների տրամադրման համար պատասխանատու անդամը քվեաթերթիկների ելունդները կենտրոնական ընտրական հանձնաժողովի սահմանած կարգով, ըստ հերթականության, դասավորում և հանձնում է տեղամասային ընտրական հանձնաժողովի նախագահին: Վերջինս դրանք առանձին կապերով տեղադրում է չհրկիզվող պահարանում:

7) Տեղամասային կենտրոնում արգելվում է կատարած քվեարկության մասին տեղեկություններ հայտնելը:

Քվեարկելուց հետո ընտրողն անհապաղ պետք է դուրս գա տեղամասային կենտրոնից:

Քվեարկության ընթացքում թեկնածուին արգելվում է գտնվել տեղամասային կենտրոնում կամ տեղամասային կենտրոնին հարող՝ մինչև 50 մետր շառավղով տարածքում, բացառությամբ քվեարկությանը մասնակցելու դեպքի:

10. Խախտումը Հանձնաժողովների նախագահների և անդամների խախտումների կանխարգելմանն ուղղված գործողությունների բացակայություն

Օրենսդրական կարգավորում-ՀՀ ընտրական օրենսգրքի 51-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ Տեղամասային ընտրական հանձնաժողովը՝

1) կազմակերպում է քվեարկությունը, ամփոփում քվեարկության արդյունքները ընտրական տեղամասում

12. Խախտումը - Իրավապահ մարմինների կողմից խախտումների ահազանգերի վերաբերյալ կանխամտածված անգործություն

Օրենսդրական կարգավորում- ՀՀ ընտրական օրենսգրքի 53-րդ հոդվածի համաձայն՝Հայաստանի Հանրապետության ոստիկանության կենտրոնական և տարածքային մարմինները, դրանց ծառայություններն ու ստորաբաժանումները պարտավոր են ապահովել ընտրությունների անցկացման բնականոն ընթացքը, ընտրական հանձնաժողովների ու դրանց անդամների անկաշկանդ գործունեությունը:

Հայաստանի Հանրապետության ոստիկանությունը ընտրությունների հետ կապված միջոցառումներում ապահովում է պատշաճ կարգ ու կանոն, հանձնաժողովի նախագահի պահանջով աջակցում հանձնաժողովներին, ապահովում է ընտրականփաստաթղթերի անվտանգ տեղափոխումն ու դրանց պահպանումն ընտրական հանձնաժողովներում:

11. Խախտումը -Քվեարկության արդյունքների կեղծում և քվեաթերթիկների դիտավորյալ անվավերացում

Օրենսդրական կարգավորում- ՀՀ քրեական օրենսգրքի 150-րդ հոդվածի համաձայն՝ հանրաքվեի կամ ընտրությունների ընթացքում ձայներն ակնհայտ սխալ հաշվելը կամ ընտրությունների արդյունքները, այդ թվում՝ արձանագրությունները, դրանց պատճենները, այլ ընտրական փաստաթղթերը և դրանց քաղվածքները ակնհայտ սխալ տվյալներով հաստատելը, քվեատուփ հափշտակելը, համակարգչում ակնհայտ սխալ տվյալներ մուտքագրելը, մուտքագրված տվյալները փոփոխելը, ինչպես նաև որևէ այլ եղանակով ընտրությունների կամ քվեարկության արդյունքները կեղծելը կամ այդ նպատակով ընտրական փաստաթղթերը վերադաս ընտրական մարմիններին սահմանված ժամկետում չներկայացնելը՝ պատժվում է ազատազրկմամբ՝ երեքից հինգ տարի ժամկետով:

Քաղաքական համատեքստ

2013 թ. նախագահական ընտրություններն ի սկզբանե համարվում էին ոչ մրցակցային, քանի որ ՀՀ Ազգային ժողովում ներկայացված 6 ուժերից 4-ը սեփական թեկնածուով հանդես չեն եկել և չեն պաշտպանել առաջադրված որևէ թեկնածուի, բացառությամբ Օրինաց Երկիր Կուսակցության, որը իր աջակցությունն է հայտնել գործող նախագահ Սերժ Սարգսյանին և նրա օգտին հանդիպումներ կազմակերպել տարբեր բնակավայրերում: Նախագահական ընտրություններին չմասնակցող քաղաքական ուժերը, ինչպես նաև մի շարք հասարակական գործիչներ հիմնականում իրենց անվստահությունն են հայտնելընտրական գործընթացին՝ հայտարարելով, որ ընտրության արդյունքները նախապես հայտնի են և սահմանված, ուստի իրենց մասնակցությունը ընդամենը կլեգիտիմացներ նախապես կեղծված ընտրությունները:

Նախընտրական պայքարում առաջադրված 8 թեկնածուներից (որոնցից 1-ն ինքնաբացարկ է հայտնել քարոզարշավի ընթացքում) որպես հիմնական թեկնածուներ են եկել հանդես գործող նախագահ Սերժ Սարգսյանը և ԱԺ-ում ներկայացված Ժառանգություն կուսակցության նախագահ՝ ինքնաառաջադրված թեկնածու՝ Ռաֆֆի Հովհաննիսյանը: Փաստացի նախընտրական քարոզչությունն ընթացել է ոչ ազատ մրցակցային մթնոլորտում, քանի որ նախընտրական քարոզչության ընթացքում ակնհայտ էր գործող նախագահ՝ նախագահի թեկնածու Սերժ Սարգսյանի մեկնարկային առավելությունը մյուս բոլոր թեկնածուների նկատմամբ, որն արտահայտվել է ինչպես նախընտրական շտաբների թվաքանակով, նրանցում ներգրավված մարդկային ռեսուրսներով, այնպես էլ նախընտրական շտաբների գործունեության ապահովման համար տարածքների վարձակալության, աշխատակիցների վարձատրության, տրանսպորտային միջոցների շահագործման համար անհրաժեշտ ֆինանսական ռեսուրսների ներդրմամբ: Սերժ Սարգսյանի նախընտրական շտաբները ձևավորվել էին 1 ընտրատեղամասում 1 նախընտրական շտաբ սկզբունքով: Մյուս թեկնածուներից Ռաֆֆի Հովհաննիսյանը ձևավորել էր շրջիկ նախընտրական շտաբներ՝ 1 համայնք 1 շտաբ սկզբունքով, սակայն ոչ բոլոր համայնքներում: Սերժ Սարգսյանի մեկնարկային առավելությունները պահպանվել են նախընտրական քարոզչության ողջ ընթացքում, քանի որ անհնար էր տարանջատել պետական և տեղական կառավարման մարմինների ռեսուրսները հանրապետական կուսակցության ռեսուրսներից:

Չնայած ոչ մրցակցային քարոզարշավին, այն առանց միջադեպերի չի անցել: Նախընտրական քարոզարշավի ընթացքում մահափորձ է իրականացվել նախագահի թեկնածու ԱԻՄ առաջնորդ Պարույր Հայրիկյանի նկատմամբ, որը կարող էր հետաձգել քվեարկության օրը, սակայն Պարույր Հայրիկյանի կողմից որոշում է կայացվել քվեարկության օրը հետաձգելու խնդրանքով չդիմել ՀՀ Սահմանադրական դատարան: Մահափորձի կազմակերպման մեղադրանքով կալանավորվել է նախագահի թեկնածու Վարդան Սեդրակյանը, որի նկատմամբ դատաքննությունը դեռևս ընթանում է:

Նախընտրական քարոզարշավի ողջ ընթացքում հացադուլ է իրականացրել նախագահի թեկնածու Անդրիաս Ղուկասյանը, որը պահանջում էր չեղյալ հայտարարել ՀՀ գործող նախագահ և նախագահի թեկնածու Սերժ Սարգսյանի թեկնածությունը՝ նրան սատարող Հայաստանի հանրապետական կուսակցության կողմից իրականացված խախտումների պատճառով:

Քարոզարշավի դիտարկման արդյունքներ

2013 թ. ՀՀ նախագահի ընտրությունների շրջանակներում Հելսինկյան Քաղաքացիական Ասամբլեայի Վանաձորի գրասենյակն իրականացրել է նախընտրական քարոզչության դիտարկում Լոռու մարզի Վանաձոր և Տավուշի մարզի Իջևան քաղաքներում: Դիտորդությունը Վանաձորում իրականացվել է 7, իսկ Իջևանում՝ 4 դիտորդների կողմից:

2013 թ. նախագահական ընտրությունների նախընտրական քարոզչության ընթացքում Վանաձոր և Իջևան քաղաքներ այցելել են Սերժ Սարգսյանը, Ռաֆֆի Հովհաննիսյանը, Հրանտ Բագրատյանը (Վանաձորում 2 եթեր հեռուստաընկերությամբ, Իջևանում հանդիպում) և միայն Վանաձոր՝ Պարույր Հայրիկյանի կենտրոնական շտաբի աշխատակիցները (հանդիպումը չի կայացել, քանի որ հանդիպմանը ներկայացել են միայն Պարույր Հայրիկյանին աջակցող ակտիվիստները՝ 5 հոգի):

Նախընտրական քարոզչության դիտարկման ամփոփում

Այսպիսով, 2013 թվականի հունվարի 21-ից փետրվարի 16-ն ընկած ժամանակահատվածում կազմակերպության կողմից իրականացված նախընտրական քարոզչության ուսումնասիրությամբ արձանագրվել են մի շարք մտահոգություններ.

- նախընտրական քարոզչության ընթացքում Վանաձորում և Իջևանում գործել են միայն նախագահի թեկնածուներ Սերժ Սարգսյանի և Ռաֆֆի Հովհաննիսյանի նախընտրական շտաբները
- ՀՀ նախագահի թեկնածու Սերժ Սարգսյանը, ով Հանրապետության գործող նախագահն է, իր նախընտրական քարոզչության ընթացքում օգտագործել է քարոզչության օրենքով արգելված միջոցներ, մասնավորապես վարչական լծակների օգտագործմամբ ապահովել է իր նախընտրական հանդիպումներին քաղաքացիների պարտադիր մասնակցությունը, պետական կամ տեղական ինքնակառավարման մարմինների զբաղեցրած շենքերում տեղակայել է իր նախընտրական շտաբները և այլն: Այս ամենը կարելի է որակել որպես վարչական ռեսուրսների օգտագործում, որը հասանելի չէ այլ թեկնածուների համար և որը խախտում է թեկնածուների կողմից հավասար հնարավորությունների օգտագործման սկզբունքը
- նախագահի թեկնածու Սերժ Սարգսյանի օգտին քվեարկելու համար, ըստ քաղաքացիներից ստացված ահազանգերի, բաժանվել են որոշակի դրամական միջոցներ, ինչը կարելի է որակել որպես քրեական օրենսգրքով արգելված արարք՝ ընտրողի կամքի ազատ իրականացման խոչընդոտում /հոդված 154[2]/:
- այս ընտրությունների ընթացքում ևս նկատվել են օրենքով արգելված վայրերում նախագահի թեկնածուների նախընտրական պաստառների փակցնելու դեպքեր:

Նման իրավիճակը կրկին վկայում է, որ այս անգամ ևս նախընտրական քարոզչությունն իրականացվել է օրենսդրության սահմանված կարգի խախտումներով, ինչը նախադրյալներ է ստեղծում գաղտնի քվերակությամբ ընդհանուր, հավասար և ուղղակի ընտրական իրավունքի հիման վրա ընտրությունների անցկացմանը:

Նախընտրական հանդիպումներ

Դիտորդական առաքելության իրականացման շրջանակներում դիտորդները մասնակցել են Իջևան և Վանաձոր քաղաքներում Նախագահի թեկնածուների հանդիպումներին, զրուցել են հանդիպման որոշ մասնակիցների հետ, հնարավորության դեպքում նախագահի թեկնածուի կամ նրա ներկայացուցչի հետ, այցելել են թեկնածուների նախընտրական շտաբներ, զրուցել են շտաբների ղեկավարների հետ:

Այսպես նախընտրական քարոզչության երկարաժամկետ դիտորդության արդյունքում պարզվել է հետևյալը.

- Կազմակերպության ներկայացուցիչները դիտարկել են Սերժ Սարգսյանի ընտրողների հետ, Ռաֆֆի Հովհաննիսյանի, Հրանտ Բագրատյանի և Պարույր Հայրիկյանի հանդիպումները, որտեղ զրուցել են Վանաձոր և Իջևան քաղաքներից 36 քաղաքացու հետ: Ստորև ներկայացվում է ՀՀ նախագահի երեք թեկնածուների հետ հանդիպմանն առնչվող հարցադրումներին: Թեկնածուների հետ հանդիպման մասնակցած քաղաքացիների հետ անցկացված հարցազրույցները թույլատրում են որոշակի եզրակացություններ կատարել ընտրական գործընթացներում նրանց մասնակցության շարժառիթների և ձևաչափի վերաբերյալ: Այսպես՝

1. ՀՀ նախագահի թեկնածու Հրանտ Բագրատյանի հետ հանդիպման մասնակցած քաղաքացիների հարցում



ՀՀ նախագահի թեկնածու Հրանտ Բագրատյանի նախընտրական հանդիպման ընթացքում հարցվել է 4 քաղաքացի, որոնցից երկուսը նշել են, որ աշխատում են, մեկն ուսանող է, իսկ մյուսը չի աշխատում:

ՀՔԱ Վանաձորի գրասենյակի դիտորդների կողմից դիտարկվել է ՀՀ նախագահի Հրանտ Բագրատյանի նախընտրական քարոզչության հետ կապված 1 հանդիպում, որին ըստ դիտորդի մասնակցել է մոտ 70 քաղաքացի:



Ընդ որում հետաքրքրական է հանդիպման մասին տեղեկանալու միջոցների ուսումնասիրությունը: Այս տվյալների ուսումնասիրությամբ պարզ է դառնում, որ Հրանտ Բագրատյանի հանդիպման ընթացքում հարցված քաղաքացիներից 2-ը հավաքի մասին տեղեկացել են հարևանից, իսկ 1-ը տեղեկացել է թեկնածուի շտաբից, ընդ որում, քանի որ թեկնածուն այդ համայնքում՝ Իջևան, նախընտրական շտաբ չի ունեցել, ենթադրվում է, որ քաղաքացին տեղեկացել է այլ վայրում գտնվող շտաբից:
Հարցված քաղաքացիները նշել են, որ հանդիպմանը մասնակցում են սեփական ցանկությամբ իսկ նրանցից 2-ը (50 %) հայտնել են, որ պատրաստվում են մասնակցել մյուս թեկնածուների հանդիպումներին:

2. **ՀՀ նախագահի թեկնածու Սերժ Սարգսյանի հետ հանդիպման մասնակցած քաղաքացիների հարցում**



ՀՔԱ Վանաձորի գրասենյակի դիտորդների կողմից դիտարկվել է ՀՀ նախագահի Սերժ Սարգսյանի նախընտրական քարոզչության հետ կապված 5 հանդիպում, որոնց ըստ դիտորդների ընդհանուր առմամբ մասնակցել է մոտ 24300 քաղաքացի:

ՀՀ գործող նախագահ՝ նախագահի թեկնածու Սերժ Սարգսյանի նախընտրական քարոզչության շրջանակներում իրականացված բոլոր հանդիպումներին ներկա են գտնվել մեծ թվով բյուջետային հիմնարկների աշխատակիցներ, պաշտոնատար անձինք՝ տեղական և մարզային կառավարման մարմինների ներկայացուցիչներ, որոնք նույնպես քարոզչական կոչերով են հանդես եկել: Դիտարկված հանդիպումներից մեկն անց է կացվել Վանաձոր քաղաքի թիվ 10 դպրոցում

ՀՀ նախագահի թեկնածու Սերժ Սարգսյանի նախընտրական հանրահավաքի ընթացքում հարցվել է 24 քաղաքացի, որոնցից 10-ը նշել են, որ աշխատում են, 5-ն ուսանող է, 7-ը չի աշխատում, իսկ 2-ը դպրոցական է: Սերժ Սարգսյանի հանդիպման ընթացքում հարցված



քաղաքացիների պատասխանից պարզ է դառնում, որ աշխատող հարցվածներից 9-ը հանդիպման մասին տեղեկացել է գործատուից (4-ը՝ աշխատում են դպրոցում), 1-ը հավաքի մասին տեղեկացել է թեկնածուի շտաբից: Ուսանող հարցվածներից 4-ը հանդիպման մասին տեղեկացել են համալսարանի ղեկավարությունից, իսկ 1-ը՝ թեկնածուի շտաբից: Հարցված քաղաքացիներից նրանք, որոնք չեն աշխատում, հանդիպման մասին տեղեկացել են ավելի բազմազան աղբյուրներից՝ մասնավորապես 2

քաղաքացի տեղեկացել են հարևանից, 2-ը՝ թեկնածուի շտաբից, և մեկական քաղաքացի տեղեկացել են ընկերներից, ԵԿՄ շտաբից և ընտանիքի անդամներից: Հարցված աշակերտներից 1-ը հանդիպման մասին տեղեկացել է դպրոցի ղեկավարությունից, մյուսը՝ թեկնածուի շտաբից, սակայն ընտանիքի անդամի միջոցով:

Հարցված 24 քաղաքացիներից միայն 1-ն է նշել, որ արդեն մասնակցել է այլ թեկնածուի (Հրանտ Բագրատյանի) հանդիպման, իսկ 5 քաղաքացի նշել են, որ պատրաստվում են մասնակցել այլ թեկնածուների հետ հանդիպումներին: Ի դեպ անդրադառնալով իր մասնակցության դրդապատճառին՝ այս քաղաքացիներից մեկը շեշտել է «Ես եմ եկել, տնօրենից չեմ լսել նման բան, մենք չենք պատկանում պետական կառույցներին, որ պարտադրված մասնակցենք»: Երկու քաղաքացի նշել է, որ եկել են ուղղակի ժամանակ անցկացնելու համար: 2 այլ քաղաքացի մասնակցել են հանդիպմանը՝ անձնական խնդիրների վերաբերյալ նամակ հանձնելու նպատակով, որոնք հանձնել են ՀՀ նախագահի թեկնածու Սերժ Սարգսյանի թիկնապահներին: Երկու քաղաքացի, որոնք նշել են, որ սեփական ցանկությամբ են եկել և համոզված են, որ մյուս քաղաքացիները նույնպես եկել են աջակցելու գործող նախագահին, եղել են ՀՀ նախագահի թեկնածու Սերժ Սարգսյանի նախընտրական շտաբի աշխատակիցներ, մինչդեռ մեկ այլ քաղաքացի դիտորդին հարցրել է՝ «Իրր թե դուք չգիտե՞ք, ինչքան մեծ ցանկությամբ դու ես ես եկել, նույնքան էլ ես: ես ահավոր վիրավորված եմ, պարտադրում են, որ անձնագրերով, պարտադիր ներկայանանք, հավաքում են բոլորի , ու հետո էլ ոստիկանության աշխատակիցներն ասում են տարածքը մաքրեք, ձեզ ո՞վ է պարտադրել, որ հիմա էլ նեղվում եք: Ուսուցչի հետ չի կարելի այդպես վարվել, պարտադիր կգաք, պարտադիր է, պարտադիր է, բայց մեզ չեն հարցնում, ցանկանո՞ւմ եք, թե՞ չէ»:

3. ՀՀ նախագահի թեկնածու Ռաֆֆի Հովհաննիսյանի հետ հանդիպման մասնակցած քաղաքացիների հարցում



ՀՔԱ Վանաձորի գրասենյակի դիտորդների կողմից դիտարկվել է ՀՀ նախագահի Սերժ Սարգսյանի նախընտրական քարոզչության հետ կապված 2 հանդիպում, որոնց ըստ դիտորդների ընդհանուր առմամբ մասնակցել է մոտ 900 քաղաքացի: ՀՀ նախագահի թեկնածու Ռաֆֆի Հովհաննիսյանի նախընտրական հավաքի

ընթացքում հարցվել է 10 քաղաքացի, որոնցից 3-ը նշել են, որ աշխատում են, 1-ը թոշակառու է, 2-ն՝ ուսանող, 3-ը չի աշխատում, իսկ 1-ը դպրոցական է: ՀՀ նախագահի թեկնածու Ռաֆֆի Հովհաննիսյանի նախընտրական հավաքի ընթացքում հարցված քաղաքացիները ըստ զբաղվածության և ըստ տեղեկանալու միջոցի բավականին բազմազան են և որևէ



տեսանելի օրինաչափություն առկա չէ: Հարցված քաղաքացիներից 5-ը նշել է, որ մասնակցել է այլ թեկնածուի (Սերժ Սարգսյանի) հանդիպմանը, որոնցից մեկը որպես մասնակցության պատճառ նշել է հանդիպմանը հետևող համերգը, իսկ մեկ ավագ դպրոցի աշակերտ նշել է, որ հանդիպմանն իրեն «դպրոցն էր տարել», սակայն կողքից նրան սաստել են ասելով, որ «Դասղեկը դրա համար հաստատ «պատասխան» կտա, եթե իմանան»:

Վարչական ռեսուրսների անբարեխիղճ օգտագործում

Եվ այսպես ի մի բերելով վերը նշված դիտարկումներ և ստորև ներկայացվող տեղեկատվությունը վկայում են, որ այս ընտրությունների ընթացքում ևս նախընտրական քարոզչության ընթացքում վարչական ռեսուրսներն շահագործվել են իշխանության թեկնածուի օգտին:

Այսպես,

- Վանաձոր քաղաքում Սերժ Սարգսյանի քաղաքացիների հետ հանդիպման նախօրեին և հանդիպման օրը քաղաքացիները տեղեկացրել են կազմակերպությանը, որ պետական հաստատությունների աշխատակիցներին, մանկապարտեզներում նաև ծնողներին հրահանգվել է պարտադիր մասնակցել Սերժ Սարգսյանի հանդիպմանը, այս մասին վկայել են նաև հանդիպման ընթացքում հարցված քաղաքացիները:
- ՀՀ Հանրապետության Նախագահի ընտրությունների նախընտրական քարոզչության ընթացքում Վանաձորում Հովի. Աբելյանի անվան թատրոնի շենքում, իսկ Իջևանում մշակույթի պալատում կուսակիցների հետ հանդիպում է ունեցել Օրինաց երկիր կուսակցության ղեկավար, Ազգային անվտանգության խորհրդի քարտուղար Արթուր Բաղդասարյանը, ով խնդրել է կուսակիցներին ակտիվ մասնակցել ընտրություններին, ընտրել Սերժ Սարգսյանին և միաժամանակ ներկայացրել է Հայաստանի Հանրապետական կուսակցության հետ համագործակցությունը, համատեղ նպատակները:
- Սերժ Սարգսյանին իրենց ձայնը տալու նպատակով նախընտրական քարոզչություն են իրականացրել Վանաձորի քաղաքապետ Սամվել Դարբինյանը, Ազգային Ժողովի պատգամավոր, ՀՀԿ խմբակցության անդամ Կարեն Սարիբեկյանը:

- Սերժ Սարգսյանի նախընտրական շտաբ է տեղակայված եղել Լոռու մարզի Ալավերդի քաղաքի քաղաքապետարանի շենքում:
- Վանաձոր քաղաքում Սերժ Սարգսյանի նախընտրական շտաբներից մեկում քաղաքացիների հոսք է եղել, իսկ շտաբի պետի սեղանին դրված է եղել ցուցակ: Դիտորդը հետաքրքրվել է, թե ինչ ցուցակ է և շտաբի պետը պատասխանել է, որ պետական կառույցներում աշխատողների անուններ են նշված: Իսկ թե ինչի համար է այդ ցուցակը, նշել է, որ նոր են ստացել, չգիտի:

Միաժամանակ կազմակերպությունը քաղաքացիներից տեղեկացել է, որ

- Վանաձոր քաղաքի դպրոցներում ժողովներ է կազմակերպվել, որի ընթացքում դպրոցների տնօրենները խնդրել են ուսուցիչներին անշահախնդիր այսինքն՝ առանց ընտրակաշառքի, ընտրել Սերժ Սարգսյանին:
- Վանաձորում պետական ռեգիստրի 2 աշխատողների Արդարադատության նախարարությունից պարտադրել են ներկայացնել Հանրապետության գործող նախագահին պարտադիր ընտրողների երկու ցուցակ՝ յուրաքանչյուրը նվազագույնը 10 քաղաքացու տվյալներով՝ նշելով, թե որ ընտրատարածքի ընտրող են:
- Վանաձոր քաղաքի որոշ դպրոցներ ու հիմնարկներ ուսուցչական կազմին ընտանիքի անդամների ցուցակներից, անձնագրային տվյալներից բացի պարտադրել են տրամադրել նաև ստորագրություններ:
- Վանաձորի Էվրիկա և թիվ 18 դպրոցներում ցուցակներ են տվել և պահանջել, որ յուրաքանչյուր աշխատող 15 հոգու անուն ներկայացնի, ովքեր ընտրելու են Սերժ Սարգսյանին:
- Վանաձորի պետական մանկավարժական ինստիտուտում Սերժ Սարգսյանին իրենց ձայնը տալու համար դասախոսների և ուսանողների շրջանում իրականացվել է քարոզչություն դասաժամին, ի դեպ, փաստնք արձանագրվել է նաև Գյումրիի Ժուռնալիստների «Ասպարեզ» ակումբի կողմից:[2]
- Լոռու մարզի Աքորի գյուղում դպրոցի դասերը նախատեսվածից շուտ են ավարտել, որ մասնակցեն Ազգային Ժողովի պատգամավոր, ՀՀԿ խմբակցության անդամ Կարեն Սարիբեկյանի հետ հանդիպմանը, ով քարոզչություն է իրականացրել Սերժ Սարգսյանի օգտին:
- Սերժ Սարգսյանի շտաբներից զանգում են տներ և առանց ներկայանալու հարցնում, թե ձեր ձայնն ում եք տալու: Բոլոր նրանք, ովքեր պետական հիմնարկի աշխատող են և համարձակվում են պատասխանել՝ գաղտնիք է կամ ձեր ինչ գործն

[2] http://www.asparez.am/news-hy/qarozarshav_vanadzori_mankavarjakanum-hy/, ի պատասխան, ՀՀ ԿԳ նախարար Արմեն Աշոտյանը նկատողություն էր հայտարարել Վանաձորի պետական անկավարժական ինստիտուտի ռեկտոր Գուրգեն Խաչատրյանին՝ քարոզչական միջոցառումը կազմակերպելու համար http://www.asparez.am/news-hy/ashotyani_nkatoxutyunypmi_rektorin-hy/

է, կանչվում են տնօրենի մոտ, իսկ եթե շտաբներին կցված ակտիվիստներն են նման կերպ պատասխանում, զրկվում են գումարից:

- Սույն թվականի փետրվարի 14-ին Վանաձորի պետական մանկավարժական ինստիտուտում աշխատակիցներին ցուցակներ է տրվել, որպեսզի զանգեն ուսանողների տներ ու հարցնեն, թե ում են ընտրելու, ըստ տեղեկատվությունը տրամադրողի՝ եթե պատասխանեն, որ Սերժ Սարգսյանին են ընտրելու, զանգահարողն ասելու է «դե խնդրում եմ անպայման գնաք ընտրության», իսկ եթե ասեն ուրիշին կամ չպատասխանեն, ուղղակի ասելու է «դե լավ»:
- Փետրվարի 14-ին ԵՊՀ համալսարանի Իջևանի մասնաճյուղի «վստահելի» գյուղաբնակ ուսանողներին տրվել է համագյուղացի ուսանողների ցուցակը, որպեսզի «վստահելի» ուսանողները ճշտեն ցուցակում առկա ուսանողները Սերժ Սարգսյանին են ընտրելու, թե ոչ:

Բարեգործություն, քողարկված ընտրակաշառք

Այս ընտրություններին ևս կազմակերպությունը ուսումնասիրությունների և քաղաքացիներից ստացված տեղեկությունների արդյունքում փաստում է, որ իշխանության ներկայացուցչի կողմից բաժանվում է քողարկված կամ ոչ քողարկված ընտրակաշառք:

Այսպես,

- Նախընտրական քարոզչության ընթացքում Վանաձորի դպրոցներում հրահանգ է տրվել այն մասին, որ պետք է ընտրություններին 70 տոկոս մասնակցություն ապահովել, որ «Տաշիրի Սամվելի» (Սամվել Կարապետյանի) անունը պետք է բարձր պահել, քանի որ նա է ընտրություններում Լոռու մարզի պատասխանատուն, իսկ նա յուրաքանչյուր դպրոցում երկու ուսուցչի (1 տարիքով և 1 երիտասարդ ուսուցիչ) պարգևատրել է 100.000 – ական դրամով:
- Իջևան քաղաքի նախընտրական երկու շտաբների ղեկավարներ նշել են, որ 1-ական քաղաքացիներ իրենց են դիմել օգնության խնդրանքով և նրանք խնդրանքը ներկայացրել են մարզային կենտրոնական շտաբ:
- Վանաձոր քաղաքում գործող Սերժ Սարգսյանի նախընտրական շտաբներից մեկի ղեկավարը նշել է. «Թաղամասի բնակիչները դիմում են թաղամասին վերաբերող խնդիրների լուծման համար: Օրինակ՝ Արդա թաղամասի 36-37 շենքերի բնակիչները դիմել եմ թաղային լուսավորման համար, քանի որ բնակիչներից մեկն ընկել է փոսը և վնասել ոտքը: Քաղաքապետ Սամվել Դարբինյանը խոստացել է, որ շատ շուտով հարցը կլուծվի: Քաղաքապետարանը կլուծի սյուների հարցը, ավագանու անդամ Ական լամպերի, իսկ համայնքատիրությունն էլ անհրաժեշտ քանակի լարը ձեռք կբերի»:
- 2013 թվականի փետրվարի 6-ին՝ ժամը 12:00-ի սահմաններում, Վանաձորի քաղաքապետ Սամվել Դարբինյանը «Բելիսսիմո» հանդիսությունների սրահում քաղաքացիների հետ հանդիպման ժամանակ դիմել է նույնիսկ 60-ն անց տղամարդկանց, թե «Դուք մեր ակտիվիստներն եք, ձեր աշխատավարձերը մինչև ամսի 15-ը կստանաք»:

- Վանաձոր քաղաքի «Բելիսսիմո» հանդիսությունների սրահում սույն թվականի 14-ին՝ ժամը 12-ի սահմաններում, քաղաքացիներին՝ որպես ակտիվիստների աշխատավարձ, բաժանվել է «ընտրակաշառք»:
- 2013 թվականի փետրվարի 14-ին՝ ժամը 14:00-ի սահմաններում, աշխատավարձի տեսքով գումար է բաժանվել նաև Վանաձոր քաղաքի Դիմաց թաղամասի համատիրությունում:
- Լոռու մարզի Վահագնի գյուղում քաղաքացին հավաքել է գյուղացիների անձնագրային տվյալները, որպեսզի մարզպետի միջամտությամբ լուծվի իր տան հետ կապված ինչ-որ խնդիր:
- Քաղաքացին կազմակերպության թեժ գծով տեղեկացրել է, որ Վանաձոր քաղաքի Տարոն 2 թաղամասում բաժանվելու է ընտրակաշառք «Հայաստանի էլեկտրական ցանցերի» տնօրենի կողմից՝ ավտոբուսում, ըստ քաղաքացու վերջինս անձամբ է ցանկանում տեսնել, թե ում է տալիս գումար:
- Վանաձոր քաղաքի Տարոն 2 թաղամասի շտաբներից մեկի աշխատակիցը տեղեկացրել է, որ Վանաձոր քաղաքի «Տաշիր» պիցցայատան աշխատակիցներն իրենց շտաբ են եկել և ասել. «Գիտեք, որ ընտրաաշխատավարձները մեր բարեկամ Տաշիրի Սամվելն է ուղարկել»:
- Վանաձոր քաղաքի Խնձորուտ թաղամասում բաժանվել է 5000-ական դրամ Սերժ Սարգսյանին ընտրելու համար, ընդ որում եթե ընտանիքը երեք ընտրողից ավելի անդամներից է բաղկացած եղել, տրամադրվել է առավելագույնը 15000 դրամ:
- Վանաձոր քաղաքի Խնձորուտ թաղամասում քաղաքացիներին «ընտրակաշառքը» բաժանվել է թաղամասի խանութներից մեկի աշխատակցի կողմից:
- Վանաձոր քաղաքի «Այսբերգ» սրճարանի մոտակա բնակելի շենքերից մեկում Ալվարդ անունով մի կին, ով աշխատում է փոստում, տնից ընտանիքին բաժանում է 30000 դրամ գումար:
- Վանաձոր քաղաքի 3-րդ մաս թաղամասում տեղակայված Սերժ Սարգսյանի նախընտրական շտաբում քաղաքացիներին խոստացել են մեկ անձնագրի դիմաց 10000 դրամ գումար վճարել, սակայն երբ քաղաքացիները գնացել են գումարը ստանալու ընդհանուր տրվել է 7500 դրամ, որը հանգեցրել է վիճաբանության:

Նախընտրական շտաբներ

2013 թ. Հայաստանի հանրապետության նախագահի ընտրությունների շրջանակներում Վանաձոր և Իջևան քաղաքներում գործել են նախագահի միայն մեկ թեկնածուի՝ Սերժ Սարգսյանի նախընտրական շտաբները: Պետք է նշել, որ նշված քաղաքներում գործել են նաև Ռաֆֆի Հովհաննիսյանի շրջիկ մեկական շտաբներ: Ըստ Հրանտ Բագրատյանի ներկայացուցչից ստացված տեղեկատվության, փորձ է արվել Վանաձորում և Իջևանում բացել նախընտրական շտաբ, սակայն ինչ-ինչ պատճառներով, որը չի ցանկացել նշել տեղեկատվությունը տրամադրողը:

Նախընտրական քարոզարշավի ընթացքում դիտորդները հարցազրույց են ունեցել Վանաձորում Սերժ Սարգսյանի 5 և Ռաֆֆի Հովհաննիսյանի 1 նախընտրական շտաբի ղեկավարների հետ, իսկ Իջևանում Սերժ Սարգսյանի 8 նախընտրական շտաբի ղեկավարների հետ: Ըստ Սերժ Սարգսյանի նախընտրական շտաբների ղեկավարներից

ստացված տվյալների՝ Վանաձոր քաղաքում գործում է Սերժ Սարգսյանի 57, իսկ Իջևանում՝ 7-35 նախընտրական շտաբ: Վանաձոր քաղաքում հարցված 5 շտաբի ղեկավարներից միայն երկուսն են պատասխանել նշված հարցին, իսկ Իջևանում հարցված շտաբի 8 ղեկավարներից 5-ը նշել են, որ գործում է 35 նախընտրական շտաբ, մեկը՝ 34, իսկ երկու շտաբի ղեկավար՝ 7:

Ըստ Սերժ Սարգսյանի նախընտրական շտաբների ղեկավարների՝ շտաբներից 3-ում աշխատում են վճարովի հիմունքներով /2 շտաբ Վանաձորում, 1 շտաբ Իջևանում/, իսկ 10-ում՝ կամավորության սկզբունքով /2 շտաբ Վանաձորում, 8 շտաբ Իջևանում/: Ստացվում է, որ ընդհանուր առմամբ այս շտաբներում աշխատակիցերից 14-ը աշխատում են վճարովի հիմունքներով, իսկ 45-ը՝ կամավորության սկզբունքով:

Վանաձորում Ռաֆֆի Հովհաննիսյանի շրջիկ նախընտրական շտաբի ղեկավարի տվյալներով իրենք աշխատում են կամավորության սկզբունքով:

Միևնույն ժամանակ կազմակերպության թեժ գծին զանգահարած քաղաքացին, որը չի ցանկացել ներկայանալ, տեղեկացրել է, որ Վանաձոր քաղաքում Սերժ Սարգսյանի նախընտրական յուրաքանչյուր շտաբում աշխատում են երեք աշխատակից, որոնցից յուրաքանչյուրը ներկայացնում է առնվազն երեք ընտրող անդամներից բաղկացած մեկ ընտանիք, ընդ որում աշխատակիցներից յուրաքանչյուրը պարտադիր ներկայացնում է ևս երկու քաղաքացու տվյալներ, որոնք պարտավորվում են ընտրել Սերժ Սարգսյանին: Նման ձևով շտաբի յուրաքանչյուր աշխատակից ապահովում է առնվազն հինգ ձայն Սերժ Սարգսյանի օգտին, որի դիմաց ստանում է 30 000 (երեսուն հազար) դրամ, որը ձևակերպվում է որպես աշխատավարձ:

Մեկ այլ քաղաքացի հայտնել է, որ ներքին հրամանով Սերժ Սարգսյանի կենտրոնական շտաբից հրահանգել են, որ բոլոր շտաբների աշխատակիցները ներկայանան որպես կուսակցական ակտիվիստներ, ովքեր աշխատում են կամավորության սկզբունքներով:

Դիտորդության արդյունքներն ամփոփելիս ևս պարզ է դառնում, որ միայն այն շտաբների ղեկավարներն են նշել, որ իրենք վճարովի հիմունքներով են աշխատում, ում դիտորդներն այցելել են նախընտրական քարոզչության առաջին օրերին:

Քարոզչանյութեր

Դիտորդության շրջանակներում հայտնաբերվել է նախագահի թեկնածուի քարոզչանյութի, մասնավորապես պաստառի արգելված վայրում փակցնելու դեպքեր: Այսպես, նախագահի թեկնածու Սերժ Սարգսյանի նախընտրական քարոզչության համար նախատեսված պաստառներ են փակցվել Իջևան քաղաքի խանութների տարածքում:

ՀՀ նախագահի թեկնածու Սերժ Սարգսյանի նախընտրական շտաբի ղեկավարներից մեկը այս կապակցությամբ հայտնել է, որ «շտաբ պատահական մարդիկ են մտնում, ովքեր կարող են վերցնել պաստառը և փակցնել օրենքով արգելված վայրերում» ու դիմել է դիտորդին, որպեսզի դիտորդներն էլ ուշադիր լինեն ու տեղեկացնեն նման դեպքերի մասին:

Ի դեպ, արգելված վայրերում փակցված պաստառներից երկուսը շտաբի ղեկավարի հետ զրույցից հետո հանվել են, արգելված վայրերում այլ պաստառները փակցվել են նախընտրական քարոզչության վերջին օրերին:

Իջևանում Սերժ Սարգսյանի նախընտրական շտաբի ղեկավարը դիտորդին տեղեկացրել է, որ Ռաֆֆի Հովհաննիսյանի պաստառները փակցված են արգելված վայրերում, մասնավորապես գյուղերում:

Պարույր Հայրիկյանի կենտրոնական շտաբի պետ Մանյա Այվազյանը կազմակերպության դիտորդին հայտնել է, որ իրենք ունեցել են խոչընդոտներ քարոզչանյութերի տարածման ժամանակ, մասնավորապես Արագածոտնի մարզի Ուշի գյուղում հայտարարել են, որ միայն Հանրապետականներն իրավունք ունեն քարոզարշավ իրականացնելու:

Ընտրացուցակներ

2013 թ. ՀՀ նախագահի ընտրությունների դիտորդության շրջանակներում արձանագրվել են մի շարք մտահոգություններ ընտրացուցակների հետ կապված: Մասնավորապես Սերժ Սարգսյանի Վանաձորում տեղակայված նախընտրական շտաբների ղեկավարներից երկուսը հայտնել են, որ ընտրացուցակներում առկա են մահացած քաղաքացիների անուններ: «Ընտրացուցակում կան 1730 մարդ, որոնցից 11-ը մահացած են»,- նշել է շտաբի ղեկավարներից մեկը՝ հայտնելով, որ խատումը վերացնելու ուղղությամբ գործողություններ են տարվում:

Քվերակության օրվա դիտարկում

2012 թ. փետրվարի 18-ի նախագահական ընտրությունների օրը Հելսինկյան Քաղաքացիական Ասամբլեայի Վանաձորի գրասենյակը դիտորդական առաքելություն է իրականացրել 52 ընտրատեղամասում, բացի այդ շրջիկ դիտորդների կողմից դիտարկվել է ևս 12 տեղամաս, իսկ հաշվարկի գործընթացը դիտարկվել է 56 տեղամասում: ընդհանուր առմամբ դիտորդական առաքելության մեջ ներգրավված են եղել 66 կարճաժամկետ դիտորդներ, որոնք իրենց դիտարկումների վերաբերյալ պարբերաբար տեղեկացրել են կազմակերպությանը, ինչպես նաև այդ դիտարկումներն արձանագրել են կազմակերպության կողմից մշակված դիտարկման քարտերում:

Քվեարկության ընթացքի դիտարկում ընտրատեղամասի ներսում

Տեղամասային ընտրական հանձնաժողովներում որպես կանոն ներկա են եղել միայն գործող նախագահ, ՀՀ նախագահի թեկնածու վստահված անձինք, որոշ տեղամասերում Ռաֆֆի Հովհաննիսյանի վստահված անձինք: Բացի մեր կազմակերպության դիտորդներից ներկա են եղել «Ընտրությունը քոնն է» ՀԿ-ի դիտորդները, որոնց հիմնականում հանդիսացել են ընտրատեղամասի տեղակայման հիմնարկի՝ կազմակերպության աշխատակից,

Քվերակության ընթացքում՝ հատկապես 11-ից մինչև 15:00, արձանագրվել է ընտրողների շատ մեծ հոսք, որը մարել է հատկապես ժամը 17:00-ից 20:00 ընկած ժամանակահատվածում: Լոռու մարզում առավել մեծ թվով ընտրողներ մասնակցել են Ստեփանավանի տարածաշրջանի գյուղերում, առավել քիչ՝ Վանաձորի և հարակից Գուգարք համայնքի ընտրական տեղամասերում: Չնայած նախընտրական քարոզչության ոչ ակտիվ մրցակցությանը քվեարկության օրը նկատվել է ընտրողների մեծ հոսք և ակտիվություն:

Քվեարկության օրը ընտրատեղամասի ներսում իրականացված դիտակման արդյունքում լրացվել է 52 դիտարկման քարտ, որոնց ամփոփ տեղեկությունները ներկայացվում են ստորև.

1. **Ընտրատեղամասի մատչելիություն հաշմանդամություն ունեցող անձանց համար**



Դիտարկված տեղամասերի 62%-ը մատչելի չեն եղել սայլակով տեղաշարժելու համար՝ թեքահարթակի բացակայության կամ այլ պատճառներով: Ընդ որում դիտարկված տեղամասերից միայն 6-ն են գտնվել շինության երկրորդ հարկում:

Թիվ 32/56 տեղամասում հենաշարժողական խնդիրներ ունեցող մի քանի հոգի հաշմանդամ, ի վիճակի չէին մեքենայից դուրս գալ, իջնել տեղամաս, հանձնաժողովի նախագահը քվեաթերթիկը տարել է մեքենայում ընտրելու:

2. Քվեասենյակի կահավորում և տարածքի բավարարություն քվեարկության գործընթացի բնականոն իրականացման համար

Դիտարկված գրեթե բոլոր տեղամասերում քվեարկության սենյակում դասավորությունը համապատասխանել է օրենքին, միայն 29/25 տեղամասում քվեախցիկները գտնվել են միմյանցից 30/40 սմ հեռավորության վրա: Դիտորդի դիտարկմամբ 31/02 տեղամասում նույնպես քվեախցիկների դասավորությունը չի ապահովել քվեարկության գաղտնիությունը: Դիտարկված տեղամասերից 29/27 և 31/16 տեղամասերի տարածքը բավարար չի եղել քվեարկության մասնակիցների բնականոն աշխատանքի ապահովման համար և կուտակումների պատճառ է հանդիսացել:

Թիվ 32/30 ընտրատեղամասի քվեասենյակի երեկոյան լուսավորությունը շատ թույլ է եղել:

3. Տեղամասում քվեաթերթիկների նմուշների առկայություն



Դիտարկված տեղամասերից 4-ում (29/08, 29/21, 31/16, 32/56) քվեաթերթիկի նմուշը առկա չի եղել:

4. Հանձնաժողովի անդամների գործառույթների բաշխում

Դիտարկված բոլոր տեղամասերում հանձնաժողովի անդամների գործառույթները բաշխվել են վիճակահանությամբ, թեև որոշ տեղամասերում հանձնաժողովի անդամները թերացել են փոխել գործառույթները ըստ սահմանված կարգի:

5. Վստահված անձանց ներկայություն



Դիտարկված տեղամասերում եղել են ՀՀ նախագահի միայն 3 թեկնածուների վստահված անձինք: Դիտարկված բոլոր 52 տեղամասերում ներկա են եղել ՀՀ նախագահի թեկնածու Սերժ Սարգսյանի վստահված անձինք: ՀՀ նախագահի թեկնածու Ռաֆֆի Հովհաննիսյանի

վստահված անձինք ներկա են եղել դիտարկված 22 տեղամասում, իսկ ՀՀ նախագահի թեկնածու Պարույր Հայրիկյանի վստահված անձինք ներկա են եղել դիտարկված 4 տեղամասում: Որոշ տեղամասերում միաժամանակ ներկա են եղել սերժ Սարգսյանի մի քանի վստահված անձինք, մասնավորապես թիվ 30/02, 41/26 և թիվ 41/12 ընտրատեղամասի քվեասենյակում պարբերաբար ներկա են գտնվել Սերժ Սարգսյանի 2 վստահված անձինք միաժամանակ, բացի այդ ՀՔԱ



Լուսանկար 1. Մինչև ոչ անձը դիտորդ և վստահված անձ

Վանաձորի գրասենյակի դիտորդն արձանագրել է, որ Տաշիրի տարածաշրջանի Մեծավան գյուղի թիվ 32/14 տեղամասում միաժամանակ ներկա է ՀՀ նախագահի թեկնածու Սերժ Սարգսյանի 4 վստահված անձ: Կազմակերպության դիտորդի միջամտությունից հետո վստահված անձանցից երկուսը տեղամասից դուրս են եկել, իսկ երրորդը հայտնել է, որ ինքը նաև դիտորդ է և ներկայացրել է «Ֆրիտյոֆ Նանսենի անվան մարդու իրավունքների պաշտպանության հայկական կենտրոն» հասարակական կազմակերպության դիտորդի վկայականը (տե՛ս լուսանկար 1):

6. Այլ կազմակերպություններից դիտորդների ներկայություն



Դիտարկված տեղամասերի 90 %-ում ներկա են եղել դիտորդներ այլ կառույցներից: Սույն տեղամասերից 29-ում դիտորդական առաքելություն է իրականացրել նաև «Ընտրությունը քոնն է» հասարակական կազմակերպությունը, որի կողմից գործուղված դիտորդները հիմնականում հանդիսացել են ընտրատեղամասի տեղակայման հիմնարկի աշխատակից և ըստ ՀՔԱ Վանաձորի գրասենյակի ստացած տեղեկատվության՝ հավաքագրվել են մարզպետարանի կողմից հաստատության տնօրենների միջոցով: Հաշվի առնելով սույն հանգամանքը և թիվ 32/14 տեղամասի վերոնշյալ դիտորդ/վստահված անձի հետ կապված միջադեպը, կարծում ենք, որ սույն կառույցների անաչառությունը խիստ կասկածելի է, հատկապես հաշվի առնելով այն փաստը, որ Հայաստանի Հանրապետությունում իշխող կուսակցությունը և պետական և տեղական կառավարման մարմինները սերտաճած են:

41/09 «Ընտրությունը քոնն է» կազմակերպության դիտորդները մեկ ժամը մեկ ներս են մտել, ճշտել ընտրողների թիվը և հայտնել ոստիկանությանը

7. Խնդիրներ տեղամասի բացումից առաջ



Տեղամասի բացումից առաջ եղած խնդիրների վերաբերյալ նշել է 6 դիտորդ: Մասնավորապես 29/13 տեղամասի դիտորդն արձանագրել է, որ քվեաթերթիկի նմուշը սխալ տեղ է գտնվել և շտկվել է դիտորդի նկատողությունից հետո՝ մինչև ընտրատեղամասի բացվելը: 30/02 տեղամաս դիտորդը ժամանել է առավոտյան 6:56 և արձանագրել, որ չհրկիզվող պահարանն արդեն բաց է: Թիվ 30/34 տեղամասում հանձնաժողովի անդամը փորձել է քվեարկել տեղամասի բացումից առաջ: Դիտորդի միջամտությամբ փորձը կանխվել է և հանձնաժողովի անդամը քվեարկել է տեղամասի բացումից հետո:

8. Ընտրացուցակների հետ կապված խնդիրներ



Ընտրացուցակների հետ կապված խախտումներ արձանագրվել են 52 դիտարկված տեղամասերից 12-ում: 29/08 տեղամասում քաղաքացի Ս. Պողոսյանը հայտնել է, որ իր անվան դիմաց արդեն առկա է այլ անձի ստորագրություն: ստորագրողի ինքնությունը պարզել չի հաջողվել և քաղաքացին ստորագրել է մեկ այլ Պողոսյանի փոխարեն, հայտնի չէ, թե արդյոք շղթան շարունակվել է: Այլ անձի փոխարեն քվերակության դեպքեր են գրանցվել նաև 29/27, 29/28, 29/41, 30/11, 41/24 և 41/27 տեղամասերում, հիմնականում դա համարել են վրիպակ և քաղաքացիները ստորագրել են այլ անձանց փոխարեն: 29/08, 29/28, 30/02, 30/34, 32/03, 32/54, 41/03, 41/27 տեղամասերում որոշ ընտրողների անուններ բացակայել են ընտրացուցակից: Անհայտ քաղաքացիներից նույնպես ստացվել են տեղեկություններ, որ քվեարկության ներկայանալով հայտնաբերել են, որ իրենց փոխարեն արդեն քվեարկած է, սակայն բարդություններից խուսափելու համար չեն բողոքել, քանի որ ընտրակաշառք էին վերցրել:

Ռաֆֆի Հովհաննիսյանի վստահված անձը ահազանգել է կազմակերպության դիտորդին այն մասին, որ 40/46 ընտրական տեղամասում ընտրացուցակներում եղել են մահացածների անուններ, որոնց փոխարեն ստորագրվել է:

30/34 ընտրական տեղամասում քաղաքացին հայտնել է, որ թոռը գրանցումից դուրս է եկել, բայց ցուցակում տվյալներն առկա են:

32/05 ընտրական տեղամասում քաղաքացին քվեարկել է մոր փոխարեն, խախտումը նկատել է Նախագահի թեկնածու Ռաֆֆի Հովհաննիսյանի վստահված անձ Գևորգ Քոթանջյանը, ով խախտման մասին տեղյակ է պահել հանձնաժողովի նախագահին, սակայն վերջինիս կողմից արձանագրություն չի կազմվել:

9. Միևնույն անձի կողմից բազմակի քվեարկության կամ լցոնման դեպք



Միևնույն անձի կողմից բազմակի քվեարկության դեպք արձանագրվել է դիտարկված 3 տեղամասում, որոնցից մեկում՝ 32/54 տեղամասում արձանագրված երկու փորձերը կանխվել են հանձնաժողովի նախագահի կողմից: Մեծավան գյուղի թիվ 32/14 ընտրական տեղամասում ընտրացուցակում մի շարք անձնագրային տվյալներ են եղել առանց ստորագրության, ինչպես նաև ստորագրություններ առանց անձնագրային տվյալների, դիտորդը նաև նկատել է, որ ընտրացուցակներում միևնույն ստորագրությունը կրկնվում է մի քանի անգամ, միևնույն ժամանակ ժամը 15:44-ին հանձնաժողովի անդամ Գոհար Քաչակուլյանը ընտրացուցակում ստորագրել է 3 քաղաքացու տվյալների դիմաց, այնուհետև ընտրացուցակում մոտ 3-ական քաղաքացիների տվյալների դիմաց ստորագրել են նաև հանձնաժողովի անդամներ Էմմա Բալայանը, Սոնիկ Մարկոսյանը, Վիկտորյա Մարկոսյանը և Գոհար Մարգարյանը:

40/41 ընտրատեղամասի հանձնաժողովի անդամներից մեկը ահազանգել է, որ տեղամաս են բերել ավելի քան հարյուր զինվորների, սակայն տվյալ ստորաբաժանումից միայն 4-ի անունն է առկա եղել ընտրացուցակներում, այսինքն փորձ է արվել կազմակերպել այդ զինվորների քվեարկությունը տեղամասում, սակայն ՀԱԿ ներկայացուցիչը կանխել է դա: Ի դեպ ըստ ՀՀ ոստիկանության կողմից հրապարակված ընտրողների ցուցակի, թիվ 40/41տեղամասում հաշվառված է 1664 ընտրող, սակայն Կենտրոնական ընտրական հանձնաժողովի հրապարակած արդյունքներում հիմնական ցուցակում նշված է 1800 ընտրող, որոնցից քվեարկել է 1302-ը: Հաշվի առնելով այն, որ քվեարկության փորձը կարող էր կանխվել միայն բացարձակապես անհերքելի հիմքերի առկայության դեպքում, կարող ենք ենթադրել, որ ընտրացուցակի փոփոխությունը (1664-ից 1800) կատարվել է ավելի ուշ և կամայականորեն:

31/05 և 32/05 ընտրական տեղամասում ըստ Ժառանգություն կուսակցությաքն ներկայացուցիչների ահազանգի գրանցվել է լցոնում:

32/14 տեղամասում դիտորդը ժամը 10:00-ին արձանագրել է լրացված ստորագրված քվեաթերթիկների լցոնում քվեատուփ, ընդ որում արձանագրված լցոնման մասին տեղեկացնելու համար ԿԸՀ-ից զանգահարել են կազմակերպության դիտորդին և նկատողություն արել, թե ինչու է նման ինֆոմացիա տվել

10. Մի քանի անձանց միաժամանակյա մուտք քվեախցիկ



Դիտարկված տեղամասերից 16-ում արձանագրվել են դեպքեր, երբ մի քանի անձինք միաժամանակ մուտք են գործել քվեարկության խցիկ: Թեև նշվում է, որ հիմնականում խախտումը կատարվել է

ընտանիքի անդամների կողմից, սակայն նշված տեղամասերից միայն երկուսում է խախտումը կանխվել հանձնաժողովի անդամների կողմից (31/54, 32/54)

11. Քվեաթերթիկը քվեախցիկից դուրս լրացնելու դեպքեր



Դիտարկված տեղամասերից 10-ում արձանագրվել են քվեաթերթիկը քվեախցիկից դուրս լրացնելու դեպքեր: Նշված տեղամասերից մեկում՝ 40/33, փորձը կանխվել է հանձնաժողովի կողմից, իսկ թիվ 40/42 տեղամասում հանձնաժողովի նախագահը պահանջել է, որ ընտրողը կրկին քվեարկի: 29/27 տեղամասում ընտրողը քվեարկել է քվեատտուփի մոտ:

Կազմակերպությունը նաև տեղեկություն է ստացել, որ Տավուշի մարզի Հաղթանակ գյուղում և Լոռու մարզի Մարց գյուղում ընտրողները, ներկայանալով ընտրատեղամաս, ստացել են արդեն քվեարկված և ծրարավորված քվեաթերթիկները: Այս հանգամանքի դեմ նույնպես բողոքներ չեն եղել համատարած ընտրակաշառքի պատճառով: Թիվ 40/39 տեղամասում մեծահասակների կողմից երբեմն բաց քվեարկության փորձեր են արվել, կամ բարձրաձայն հարցրել են այս կամ այն թեկնածուի համարը քվեաթերթիկում, սակայն հանձնաժողովի նախագահը բացատրել է, որ դա խախտում է: Թիվ 40/36 տեղամասում ժամը 17:55 մի ընտրող կատարվել է բաց քվեարկություն, անմիջապես ցուցակի լրացումը կատարելուց հետո, հանձնաժողովի անդամների դիմաց, որոնք որևէ միջոց չեն ձեռնարկել խախտումը կանխելու կամ արդեն իրականացված խախտումը գրանցամատյանում գրանցելու համար: Ընդամենը առավոտյան ժամը 10:00-ի դրությամբ 32/14 ընտրական տեղամասում գրանցվել է բաց քվեարկության 6 դեպք

12. Քվեարկության մասին հանձնաժողովի անդամին կամ վստահված անձին հայտնելու դեպքեր



Դիտարկված տեղամասերից 12-ում քվեարկության մասին հանձնաժողովինկ կամ վստահված անձին հայտնելու դեպքեր են գրանցվել: 29/14 տեղամասում քվեարկելուց առաջ ընտրողը բարձրաձայն նշել է թիվ 6 (Սերժ Սարգսյան), սակայն սաստվել է հանձնաժողովի կողմից: 29/21 տեղամասում ՀՀ նախագահի թեկնածու

Սերժ Սարգսյանի վստահված անձը ճանաչել է գրեթե բոլոր ընտրողներին և մոտենալով յուրաքանչյուրին ինչ-որ բան շշնջացել ականջին: Թիվ 29/27 տեղամասում քաղաքացին բարձրաձայնել է, որ ինքն ընտրում է նախավերջինին (Սերժ Սարգսյան), բացի այդ, ընտրելուց հետո շատերը մոտեցել են Սերժ Սարգսյանի վստահված անձանց: Թիվ 29/41 տեղամասում դիտորդն արձանագրել է դեպքեր, երբ ընտրողը քվեախցիկից դուրս է ծալում քվեաթերթիկը, ներկայացնում հանձնաժողովի անդամին, բարձրաձայնում է իր

ընտրության մասին: Թիվ 30/25 տեղամասում մի տարեց կին հայտնել է վստահված անձին, որ ընտրել է գործող նախագահին: Թիվ 31/54 տեղամասի միջանցքում բացականչել են «Ապահով Հայաստան» (ծթ. ՀՀ նախագահի թեկնածու Սերժ Սարգսյանի կարգախոսը): 31/54 և 41/12 տեղամասերում մի քանի այլ ընտրողներ ընտրելուց հետո բարձրաձայնել են, որ ընտրել են Սերժ Սարգսյանին: Թիվ 32/56 տեղամասում որոշ անձինք քվեաթերթիկը ծրարի մեջ են դրել քվեախցիկից դուրս, մի հոգի բարձրաձայն հայտնել են, որ Սերժ Սարգսյանին են ընտրել: 40/33 տեղամասում դիտորդը մի շարք դեպքեր է արձանագրել, երբ ընտրողները հարցրել են, թե արդյոք պետք է ցույց տան, թե ում են ընտրել: 32/56 ընտրական տեղամասում մի պապիկ ընտրելուց հետո հանձնաժողովի անդամներին է նայել ու ասել. «Սերժին եմ ընտրել», նույն տեղամասում հանձնաժողովի անդամը ծեր պապիկին ասել է. «Եթե չտեսնես էլ, հեշտ ազգանուն է, տարածված ազգանուն է, հեշտ կգտնես»: Թիվ 41/21 ընտրական տեղամասում հանձնաժողովի անդամները և վստահված անձինք ընտրողներին հարցրել են, թե ում են ընտրել

13. Քվեարկության գաղտնիության պահպանման այլ խոչընդոտներ



Քվեարկության գաղտնիության այլ խոչընդոտներ արձանագրվել են դիտարկված տեղամասերից 4-ում: Մասնավորապես 29/13 տեղամասում քվեարկող զինծառայողներին ուղեկցող հրամանատար պրն. Եղշատյանը յուրաքանչյուր զինծառայողի հետ մոտեցել է քվեախցիկին և ստուգել, թե ում են ընտրում:

Այս փաստը լուսանկարվել է նույն տեղամասում ՀՀ նախագահի թեկնածու Ռաֆֆի Հովհաննիսյանի վստահված անձի կողմից (տե՛ս լուսանկար 2): Ըստ ՀՔԱ Վանաձորի գրասենյակի տիրապետած տեղեկատվության սույն փաստով հարուցված քրեական գործը կարճվել է հանցակազմի բացակայության հիմքով:

Լոռու մարզի 29/25 ընտրական տեղամաս է մտել քաղաքացի, մոտեցել նախագահին և ասել, որ մեքենայում իրեն է սպասում հաշմանդամություն ունեցող անձ, ով չի կարող մտնել տեղամաս, նախագահը քվեաթերթիկը տվել է վերջինիս, ով առանց հանձնաժողովի անդամի կամ այլ անձի ուղեկցության դուրս է եկել տեղամասից, նստել մեքենա, այնուհետև քվեարկված քվեաթերթիկը տարել և հանձնել է տեղամաս: 40/33 տեղամասում քվեախցիկների ետևում եղել է սենյակ, թեև այնտեղ հիմնականում մուտք են գործել, երբ քվեախցիկում ընտրող չի եղել, այնուամենայնիվ քվեախցիկները տեղափոխվել են և տեղադրվել գաղտնիությունը ապահովող դիրքով:

Թիվ 29/28 տեղամասում, դիտորդը կասկածելի երևույթ է նկատել: Ընտրողների մեծամասնության ձեռքում եղել են փոքր ուղղանկյուն կպչուն թղթեր, անձնագրերի մեջ: Թղթերի վրա նշված է եղել ընտրացուցակում ընտրողի համարը, որը ըստ հանձնաժողովականների, նորմալ երևույթ էր. քանի որ ընտրողները չեն հիշում թիվը և գրում են, որպեսզի չմոռանան: Բայց կասկածելի է, թե ինչպես կարող էին ընտրողներն ինքնաբուխ կերպով նույնտաիպ կպչուն թղթերով ներկայանալ քվեարկության: Հարակից 29/29 դիտորդը նկատել է, որ մեքենայով ցուցակներ ու մարդիկ են տեղափոխվում և տեղամաս մտնելիս ընտրողների նույնատիպ կպչուն թղթեր են բաժանվում: Սույն գործողությունը նկատվել է Սպիտակ քաղաքի դիտարկած բոլոր տեղամասերում և ըստ ամենայնի նպատակ է ունեցել վերահսկել ընտրողների հոսքը տեղամաս:

14. Քվեարկության սենյակում ներկա գտնվելու թույլտվություն չունեցող անձանց ներկայություն



Քվեարկության սենյակում գտնվելու իրավուքն չունեցող անձինք գտնվել են դիտարկված տեղամասերից 11-ում: Մասնավորապես՝ թիվ 29/36 տեղամասի քվեարկության սենյակում քվեախցիկների մոտ ներկա են եղել համապատասխան վկայականներ չկրող անձինք: Թիվ 29/21 տեղամասում պարբերաբար գտնվել է գյուղապետը և այլ քաղաքացիներ, որոնք ինտենսիվ կերպով զբաղված են եղել մարդկանց տեղամաս բերելով: Դիտորդի դիտարկումից հետո հանձնաժողովի նախագահը նրանց դուրս է հրավիրել քվեասենյակից, սակայն վերադարձել են: Թիվ 29/41 տեղամասում որոշ ժամանակ գտնվել են Շիրակամուտ համայնքի ղեկավարը, դպրոցի տնօրենը և ևս 2 քաղաքացի՝ ենթադրաբար հանձնաժողովի նախագահի ամուսինը և եղբայրը: Թիվ 32/56 տեղամասի ընտրողները, հիմնականում տղամարդիկ քվեարկելուց հետո վերադարձել են տեղամաս:

Թիվ 29/18 տեղամասում Սերժ Սարգսյանի վստահված անձն է եղել Բազում գյուղի գյուղապետը (14:30-24:00) և գյուղապետի տեղակալը անընդհատ շրջում էր տարածքում: Թիվ 32/56 տեղամասում ժամանակ առ ժամանակ հայտնվել են ինչ-որ տղամարդիկ, զրուցել հանձնաժողովի նախագահի հետ, ապա վստահված անձանց և հեռացել: Թիվ 41/24 ընտրատեղամաս է այցելել ԱԺ պատգամավոր Հակոբ Հակոբյանը, հարցրել է խախտումների մասին, ինչպես է ընթանում քվեարկությունը և դուրս է եկել:

29/27 ընտրական տեղամասում 09:30-ի դրությամբ գտնվել են Նախագահի թեկնածու Սերժ Սարգսյանի 3 վստահված անձ /պաշտոնապես նրանցից գրանցված է եղել միայն մեկը/: Ժամը 11:40-ին 30/22 տեղամասում գտվել է տեղամասում գտնվելու իրավունք չունեցող անձ, ով լուսանկարել է տեղամասում գտնվող քաղաքացիներին:

Թիվ 31/25 ընտրական տեղամասում ինչ-որ քաղաքացի անհընդհատ ներս ու դուրս է արել ու առաջարկել իր օգնությունը, որից դժգոհել են նաև հանձնաժողովի անդամները:

32/34 ընտրական տեղամասում միաժամանակ գտնվել են Սերժ Սարգսյանի 2 վստահված անձ՝ Ա. Սիմոնյան, Հ. Մելքոնյան:

Թիվ 40/33 ընտրական տեղամասում՝ քվեարկության սենյակում, գտնվել է համայնքի գյուղապետի որդին երկու ոստիկանների հետ, ովքեր տեղամասում գտնվելու իրավունք չեն ունեցել: Ժամը 10:30-ի սահմաններում Հաղարծին գյուղի 41/12 ընտրատեղամասում արձանագրվել է, որ տեղամասի ներսում գտնվում են Սերժ Սարգսյանի վստահված երկու անձ, որոնցից մեկի մոտ նույնիսկ բացակայել են համապատասխան վկայականները, սակայն մի քանի անգամ հանձնաժողովի նախագահին տեղյակ պահելուց հետո էլ, մոտ երկու ժամվա ընթացքում տվյալ անձը անարգել ելումուտ է արել ընտրատեղամաս:

Թիվ 41/23 ընտրական տեղամասում՝ քվեարկության սենյակում, մի քանի անգամ միաժամանակ գտնվել են Ս. Սարգսյանի մեկից ավելի վստահված անձինք: 41/26 ընտրական տեղամասում ժամը 08:00-ի սահմաններում միաժամանակ ներկա է գտվել Սերժ Սարգսյանի երկու վստահված անձ, կազմակերպության դիտորդի միջամտությունից հետո վստահված անձանցից մեկի, ով Ս. Սարգսյանի նախընտրական շտաբի պատասխանատուներից է, և դիտորդի միջև վիճաբանություն է սկսվել, վստահված անձը հեռացվել է քվեարկության սենյակից, սակայն վերջինս մինչեւ քվեարկության ավարտը գտնվել է տեղամասի մոտ եւ ձեռքին առկա ցուցակներից օգտվելով՝ զանգել ընտրողներին եւ կանչել տեղամաս:

Թիվ 41/26 ընտրական տեղամասի տարածքում մեկ քաղաքացի, ով խուսափել է ներկայանալ, ասել է, որ ինքը իրենց շենքի պատասխանատու է նշանակված. ինքը պատասխանատու է նրա համար, որ շենքի բնակիչները գան քվեարկության: 41/12 տեղամասում ոստիկանները մասնակցության տվյալներ են պահանջել հանձնաժողովից և գաղտնի ասել, որ դիտորդները դրա մասին չպետք է իմանան:

15. Ինքնուրույն քվեարկել չկարողացող քաղաքացիների օգնության կազմակերպում

Ինքնուրույն քվեարկել չկարողացող քաղաքացիներին հիմնականում օգնել են տարբեր անձինք, որոնք ուղեկցել են այս ընտրողներին: Թիվ 29/36 դիտորդն արձանագրել է, որ միևնույն անձը մեկից ավելի անգամ օգնել է քաղաքացիներին քվեարկել: Նույն տեղամասում քաղաքացուն օգնել են քվեարկել նաև հանձնաժողովի անդամը, ՀՀ նախագահի թեկնածու Սերժ Սարգսյանի վստահված անձը և տեղամասում գտնվելու իրավունք չունեցող այլ անձ:

Թիվ 29/21 տեղամասում դիտորդն արձանագրել է, որ քաղաքացին հայտարարել է, որ տեսնում է, ինքնուրույն կընտրի սակայն ՀՀ նախագահի թեկնածու Սերժ Սարգսյանի վստահված անձը կանչել է նրան մի կողմ և ասել. «Դու չգիտես, քեզ օգնություն է պետք, դու չես կարող», դրանից հետո դիմել են մի քաղաքացու, որ օգնի քվեարկել: Ի դեպ այս տեղամասում ըստ դիտարկման օգնությամբ քվեարկել է 106 քաղաքացի, այսինքն քվեարկության մասնակիցների 10,1 %-ը: Դիտարկված տեղամասերից 3-ում ինքնուրույն քվեարկել չկարողացող անձանց օգնողների տվյալները ոչ միշտ են գրանցվել:

16. Քվեարկության սենյակում միաժամանակ 15-ից ավել ընտրողի ներկայություն



Դիտարկված տեղամասերի 50 %-ում կուտակումներ չեն եղել: 19-ում կուտակումներ եղել են երբեմն և հիմնականում ցերեկային ժամերին և կարգավորվել են հանձնաժողովի կողմից, իսկ դիտարկված տեղամասերից 7-ում հաժախակի կուտակումներ են եղել և իրավիճակը լիովին չի վերահսկվել:

Թիվ 29/27 ընտրական տեղամասում ժամը 12:18-ին դիտորդը հայտնել է, որ տեղամասում պարբերաբար գտնվել են ավելի քան 30 ընտրողներ, որ իրավիճակը լարված է և չի վերահսկվում: Թիվ 32/14 ընտրական տեղամասում քվեարկության սենյակում ժամը 14:01-ին միաժամանակ գտնվել է ավելի քան 40 ընտրող:

Ժամը 10:00-ի սահմաններում 41/11 ընտրական տեղամասի շրջակայքում արձանագրվել է մարդկանց կուտակումներ, խոսքը ոչ թե ընտրողների մասին է, այլ մի քանի տասնյակ տղամարդկանց, ովքեր գյուղապետ Արարատ Թամրազյանի գլխավորությամբ, իրենց ասելով՝ «հենց էնպես» կանգնած են եղել ընտրատեղամասի մոտ, կազմակերպության դիտորդը տարածքում իրենց ծառայությունն իրականացնող ոստիկանների ուշադրությունը հրավիրել է այդ փաստի վրա, սակայն նրանց կողմից ոչինչ չի ձեռնարկվել:

Ժամը 10:30-ի սահմաններում թիվ 41/13 ընտրական տեղամասի մոտ կանգնած են եղել մոտ տասը երիտասարդ, ովքեր ակնհայտ ոչ մի կարգավիճակ չեն ունեցել, ընտրատեղամասը հսկող ոստիկանը՝ կապիտան Արմեն Քոչարյան, կազմակերպության դիտորդին ասել է, որ նրանք ոչ մի խախտում չեն կատարում, այնուամենայնիվ երիտասարդները, խուսափելով ֆոտոխցիկի արձանագրումից, լքել են տեղամասի տարածքը:

41/19 ընտրական տեղամասում համայնքի ավագանու անդամները ժամը 15:00-ի սահմաններում ընտրացուցակների մոտ իբր օգնելու նպատակով ընտրողներին հուշել են նրանց համարը ցուցակում, սակայն, ինչպես նկատել է կազմակերպության դիտորդը, ավագանու անդամները նաեւ իրենց մոտ առկա թղթի կտորների վրա գրանցել են տվյալ անձի անուն, ազգանունը

17. Տեղամասում քարոզչական նյութերի և միջոցառումների առկայություն

Քարոզչական նյութերը արձանագրվել են դիտարկված տեղամասերից երկուսում: Մասնավորապես թիվ 29/21 ՀՀ նախագահի թեկնածու Սերժ Սարգսյանի վստահված անձը նստած է եղել քվեաթերթիկների տրամադրման սեղանի մոտ և քաղաքացիներին ասել, որ ընտրեն 6-րդ համարը: Թիվ 32/14 տեղամասում վստահված անձը կրել է «Դեպի ապահով Հայաստան» գրառումով շարֆ, որը հանդիսանում էր ՀՀ նախագահի թեկնածու Սերժ Սարգսյանի նախընտրական քարոզչության տարրերից:

18. Խախտումների արձանագրում գրանցամատյանում



Դիտարկված տեղամասերից 18-ի վերաբերյալ դիտորդները նշել են, որ խախտումներ չեն եղել, 17 տեղամասերում արձանագրված բոլոր խախտումներն ըստ դիտորդների արձանագրվել են գրանցամատյանում: 7 տեղամասում տեղի ունեցած խախտումները չեն արձանագրվել, իսկ 10 տեղամասում արձանագրվել են ոչ բոլոր խախտումները:

19. Բողոքներ և դժգոհություններ



Բացի ընտրացուցակներում սեփական անունը չգտնելու հետ կապված բողոքները, եղել են նաև այլ դժգոհություններ: մասնավորապես՝ թիվ 29/14 տեղամասում ընտրողը իր քվեարկությունը կատարելուց հետո հանձնաժողովի նախագահին փորձել է համոզել, որ նրանք քվեարկում են բացակաների փոխարեն: Նախագահը պնդել է, թե նման բան չի կարող լինել: Թիվ 29/27, 30/09 և 40/39 տեղամասերում քաղաքացիները դժգոհել են հանձնաժողովի դանդաղ աշխատանքից:

Թիվ 30/31 տեղամասում քաղաքացին պատռել է քվեաթերթիկը այն բանից հետո, երբ հանձնաժողովի նախագահը չի թույլատրել, որ քաղաքացուն օգնի իր ծանոթը:

20. Հանձնաժողովի անդամների աշխատանքի գնահատականը 10 բալանոց սանդղակով



Խախտումների արձանագրման դեպքում հիմնականում հանձնաժողովի անդամները պատրաստակամ են եղել շտկելու, սակայն մի շարք տեղամասերում շտկումները եղել են միայն դիտորդի նկատողության հետևանքով, իսկ հանձնաժողովի կողմից նախաձեռնողականությունը բացակայել է: Թիվ 29/08 տեղամասի հանձնաժողովի նախագահն ագրեսիվ պահվածք է ցուցաբերել և խոչընդոտել դիտորդի աշխատանքին՝ խիստ սահմանափակելով նրա տեղաշարժը: Հանձնաժողովի նախագահի վարքը փոխվել է միայն այն բանից հետո, երբ տեղամաս է այցելել ՀՔԱ Վանաձորի գրասենյակի նախագահը և արձանագրել դիտորդի աշխատանքի խոչընդոտման և մի շարք այլ խախտումներ:

Թիվ 30/01 ընտրական տեղամասում հանձնաժողովի կողմից ճնշումներ են գործադրվել Ռաֆֆի Հովհաննիսյանի վստահված անձի նկատմամբ: Միևնույն ընտրական տեղամասում խոչընդոտվել է դիտորդի ազատ տեղաշարժման իրավունքը, մասնավորապես հանձնաժողովի անդամներից Վ. Ջաղինյանը կազմակերպության դիտորդին բարձր ձայնով և կոպտորեն նկատողություն է արել, իբր նա չհրկիզվող պահարանի մոտ կանգնած հանձնաժողովի նախագահի փաստաթղթերին է նայում, մինչդեռ դիտորդը չհրկիզվող պահարանին մեջքով փորձել է շրջանցել հանձնաժողովի նախագահի և քարտուղարի սեղանը և մոտենալ հանձնաժողովի մյուս անդամների սեղաններին, երբ հանձնաժողովի նախագահին դիտորդը հարցրել է, թե արդյոք նա էլ է կարծում, որ տվյալ դեպքում ինքը խախտում է ընտրական կարգը, նախագահը պատասխանել է. «Նման բան չեմ նկատել, նկատելու դեպքում կմիջամտեմ, քո փոխարեն լինեի չէի պատասխանի հանձնաժողովի անդամին, իսկ հանձնաժողովի անդամի մասին ում, ինչ պետք է կասեմ»:

Թիվ 41/27 ընտրատեղամասի դիտորդը նշել է, որ ընտրատեղամասի հանձնաժողովի նախագահը կարծես չի վստահում մյուս անդամներին և փորձում է վերահսկել բոլորի քայլերը, մյուսներն էլ զգուշավոր են և աշխատում են թերություններ չլինեն: Նախագահի նախաձեռնությամբ արձագանքում են յուրաքանչյուր դեպքի:

Դիտորդների կողմից նաև արձանագրվել է, որ հանձնաժողովի անդամները իրականացրել են գործողություններ, որոնք հակասել են ընտրական օրենսգրքով սահմանված իրենց լիազորություններին, մասնավորապես՝ թիվ 29/25 տեղամասի հանձնաժողովի նախագահը մինչև 14:00 պարբերաբար զանգահարել է ինչ-որ տեղ և կանչել մարդկանցով լի մեքենաներ: Թիվ 31/54 տեղամասի հանձնաժողովը քվեարկության վերջին 2 ժամվա ընթացքում զննել են ընտրացուցակները և դրսում գտնվող ինչ-որ անձանց տեղեկացրել, թե ընտրողներից որոնք չեն ներկայացել ընտրության: Թիվ 29/41 տեղամասում քվեարկության ընթացքում հանձնաժողովի նախագահը բացի ԿԸՀ-ին ընտրողների քանակի մասին պարբերաբար տեղեկատվություն է տվել այլ անձի, ենթադրաբար համայնքի ղեկավարին: Թիվ 40/36 տեղամասի հանձնաժողովի անդամները նշել են, որ նախապես տեղյակ են եղել, թե ընտրողներից ով չի ներկա և ով ում օգտին է քվեարկելու:

Միաժամանակ, հարկ ենք համարում հայտնել, որ կազմակերպության հաղորդագրության մեջ նշված որոշ տեղամասերում արձանագրված խախտումների մասին բարձրաձայնելու համար կազմակերպության դիտորդների նկատմամբ ճնշումներ են գործադրվել. փորձ է արվել սահմանափակել նրանց ազատ տեղաշարժը տեղամասում, մի տեղամասում նույնիսկ հանձնաժողովի ներկայացուցիչը սպառնացել է, թե «ընտրությունները այնուամենայնիվ ավարտվելու են»:

Քվեարկության օրվա դիտարկում տեղամասի շրջակայքում

Ընտրական տեղամասերի շրջակայքի դիտարկումից ակնհայտ է դարձել, որ արտաքին գործոնի ազդեցությունը չափազանց մեծ է եղել և ընտրողների ուղղորդումը համակարգված բնույթ է կրել: Քաղաքացիների ուղղորդման գործում մեծ է եղել համայնքների ղեկավարների կամ ՏԻՄ այլ ներկայացուցիչները, այսինքն կրկին գործող նախագահի օգտին կիրառվել են անօրինական վարչական լծակներ, որոնք հնարավորություն են ընձեռել վերահսկել քվեարկության ողջ գործընթացը, ինչն անառարկելիորեն ազդել է քվեարկության արդյունքի վրա:

1. **Քարոզչական նյութեր, քարոզչություն, եթե այո, որ թեկնածու(ներ)ի օգտին**



Քարոզչական նյութեր անձանագրվել են դիտարկվա տեղամասերից 3-ում: Թիվ 31/25 ընտրատեղամասում առկա է եղել Հայաստանի հանրապետական կուսակցության նշանով պաստառ:

Թիվ 31/16 տեղամասում քվեարկող զինվորներն իրենց մոտ ունեցել են ՀՀ նախագահի թեկնածու գործող նախագահ Սերժ Սարգսյանի քարոզչական 2 շարֆ: Թիվ 32/30 տեղամասի մոտ 150մ հեռավորության վրա գտնվել է Սերժ Սարգսյանի նախընտրական շտաբը:

2. **Տեղամասի շրջակայքում քաղաքացիների կուտակումներ, եթե այո՝ ի՞նչ պատճառով է այդ կուտակումը և արդյո՞ք ճանաչում եք այդ մարդկանց**



Դիտարկված տեղամասերից 22-ի շրջակայքում նկատվել են կուտակումն: Ինչպես նշում են դիտորդները թիվ 29/07, 29/27, 29/28, 30/02 տեղամասի շրջակայքում կուտակումներ են եղել: քանի որ ընտրողներին խմբերով են տեղափոխել տեղամաս:

Թիվ 29/13, 31/16, 32/30 տեղամասերի շրջակայքում կուտակումների պատճառ է եղել զինծառայողներին խմբերով ընտրատեղամաս բերելը: Թիվ 29/34, 31/54, 32/18, 32/56 և 41/19 տեղամասերի շրջակայքում կուտակումների պատճառ է հանդիսացել այն, որ ընտրողները քվեարկությունից հետո մնացել են տարածքում և քննարկել կամ հետևել, թե ովքեր են գալիս ընտրության: Թիվ 41/22 տեղամասի հարակից տարածքում բավականին երկար ժամանակ գտնվել է Իջևանի քաղաքապետ Վ.Ղալումյանն իր աշխատակից-համախոհներով և հետևել անցուդարձին: Թիվ 41/26 Սերժ Սարգսյանի վստահված անձը և նրա հետ եկած այլ մարդիկ, այդ թվում մեկ պատգամավոր, հսկել են, թե ովքեր են գալիս ընտրության:

3. Ճնշումներ, սպառնալիքներ կամ հարկադրանք Եթե այո՝ ինչպիսի՞



Թիվ 29/08 ընտրական տեղամասում դիտորդն արձանագրել է, որ Սերժ Սարգսյանի վստահված անձն անընդհատ դուրս է եկել, իբր դրսում փակցված ընտրողների ցուցակները նայելու և ընտրողների հետ մտել տեղամաս:

Թիվ 29/13 սպան զինծառայողներին թելադրել է ընտրատեղամասում ուր գնալ, ինչ անել և չի հեռացել քվեախցիկի կողքից: Թիվ 29/21 տեղամասում, քվեարկության միայնակ եկած որոշ քաղաքացիների ՀՀԿ վստահված անձը ճանաչելով հարցրել է, թե ինչու են միայնակ եկել և ուր են ընտանիքի մյուս անդամները, որոնք պետք է գային: Թիվ 29/21 ընտրատեղամասում Սերժ Սարգսյանի վստահված անձ Ա. Աբազյանը մոտեցել է քվեարկության եկած ընտրողներին, մինչև քվեարկելը զրուցել նրանց հետ, քվեարկելուց հետո նորից մոտեցել համագյուղացիներին, զրուցել նրանց հետ, իսկ ընտրողների հեռանալուց հետո վստահված անձն իր մոտ եղած ցուցակում ինչ-որ նշումներ է կատարել: Թիվ 30/11 և 30/12 ընտրական տեղամասերի դիմաց դիտորտը նկատել է երկու երիտասարդի, որոնք ուղղորդել է ընտրողներին՝ ասելով՝ «Գիտեք չէ՞, 6 համարը»:

Թիվ 41/23 երկու քաղաքացի պարբերաբար մոտեցել են դրսում ցուցակներում իրենց անունները փնտրողներին և առաջարկել իրենց օգնությունը՝ ցուցակների հարցում կողնորոշվելու հարցում, այնուհետեւ ցածրաձայն հորդորել ընտրե Ս. Սարգսյանին, երբեմն էլ հարցրել՝ «Ձեզ ասված չէ՞»: Նույն տեղամասի շրջակայքում մի քանի անգամ երկար ժամանակով գտնվել է Տավուշի մարզպետ Արմեն Ղուլարյանի որդին, տեղամասի մոտ իր մեքենան է կայանած եղել ԵԿՄ Տավուշի մարզի նախագահ Ռուդիկ Դավթյանը, իսկ մոտ մեկ ժամ վերջինս մեքենայի մոտ նստած է եղել մի աթոռակի և հետևել է ընտրողների շարժին:

Թիվ 30/02 տեղամասից ոչ հեռու՝ համայնքի գյուղապետի որդին և Սերժ Սարգսյանի վստահված անձինք պարբերաբար իրենց մոտ են "հրավիրել" քվեարկության եկած ընտրողներին: Թիվ 31/16 տեղամասի մոտ վաշտի հրամանատարը զինվորների հրամայել է՝ «Ով հարցնի, չասեք, թե ում եք ընտրելու, ոնց արդեն գիտեք, թենց կանեք, ու ողջ ընթացքում տեղամասում է եղել:

Թիվ 41/23, 41/26 ընտրական տեղամասերում Ս. Սարգսյանի վստահված անձը հաճախակի դուրս են եկել քվեարկության սենյակից, հանդիպել դրսում գտնվող իրենց վստահված անձանց հետ, հսկել ընտրողների շարժը

4. ընտրակաշառքի բաժանում



Քվեարկության օրը ընտրակաշառքի բաժանման դեպք է գրանցվել թիվ 29/25 տեղամասի բակում ժամը 11:30-ի սահմաններում:

Թիվ 29/27 ձայների հաշվարկի ընթացքում այդ մասին հանձնաժողովի անդամներն ուղղակի բարձրաձայնել են այդ օպրը բաժանված ընտրակաշառքի մասին: Ժամը 09:30-ին կազմակերպության դիտորդների կողմից թիվ 30 մանկապարտեզի մոտ արձանագրվել է 21SU 880 մակնիշի ավտոմեքենայի մոտ քվեարկությունից հետո արդեն քվեարկած ընտրողների կուտակում, որոնք ամենայն հավանականությամբ ինչ-որ բան են ակնկալել այդ ավտոմեքենայում նստած մարդկանցից /հասցեն՝ ք. Վանաձոր, Շինարարների 91/:

5. մարդկանց խմբերով տեղափոխում տեղամասային կենտրոն, ում օգտին



Քաղաքացիների տեղափոխում գրանցվել է դիտարկված 64 տեղամասերից 12-ում: Դիտորդների կողմից արձանագրվել է, որ տեղափոխությունները իրականացվել են բացառապես գործող նախագահ՝ նախագահի թեկնածու Սերժ Սարգսյանչի օգտին՝ նրա վստահված անձանց կամ ՀՀԿ հանձնաժողովի անդամների հրահանգով:

Թիվ 29/21 տեղամաս հիմնականում բերվել են ծերեր, որոնք բոլորը քվեարկել են ուրիշի օգնությամբ: Թիվ 29/27 տեղամաս քաղաքացիներին բերել են մարդատար ավտոմեքենաներով՝ ընդ որում հաճախ միևնույն մեքենաներով: Ըստ դիտորդի իրավիճակը բավականին լարված է եղել և վստահված անձինք անընդհատ հետևել են նրա կողմից կատարվող գործողություններին:

Թիվ 29/28 տեղամասի դիտորդը նշել է, որ տեղացի լինելով, չի կարծում, որ Սպիտակում այդքան շատ մասնավոր մեքենա կա, մինչդեռ մի քանի ժամ շարունակ անընդհատ մասնավոր մեքենաներով ընտրողներ են բերվել քվեարկության:

Թիվ 31/54 տեղամասի տեղակայման համայնքի ղեկավարի եղբայրը անընդհատ մտել է քվեարկության սենյակ, տեղեկացել չքվեարկած ընտրողների մասին և որոշ ժամանակ անց մի ընտանիք կամ անձ ներկայացել է ընտրության: Այլ բնակավայրերից քվեարկության ավարտից 1 ժամ առաջ մարդատար մեքենաներով ընտրողներ են բերվել ընտրելու: Հանձնաժողովի նախագահի ամուսինը մեքենայով մերթընդմերթ ընտրողներ է բերել սեփական մեքենայով:

Թիվ 40/42 տեղամասի ընտրողներին ըստ դիտորդի հիմնականում տեղափոխել են միկրոավտոբուսներով: Թիվ 29/27 ընտրական տեղամասի շրջակայքում դիտորդն արձանագրել է ոչ միայն ընտրողների տեղափոխում մեքենաներով, այլ նաև ուղղորդում:

Թիվ 30/34 ընտրական տեղամասում բնակբաժնի պետը, ով նախագահի թեկնածու Սերժ Սարգսյանի վստահված անձն է հանդիսացել, դիտորդի ներկայությամբ զանգահարել է մի քաղաքացու և բարձրաձայն ասել. «Մեքենան թող գնա կանգնի, որ անտեղի չսպասի, դե հմի չգիտեմ, դրանց հավաքի բեր», վերջինս նաև ուղղորդել է ընտրողներին, ասել, թե ում ընտրեն: Քաղաքացիների տեղափոխությունը խմբերով ակնհայտ է նաև կոնկրետ ժամերին արձանագրված բարձր հաժախելիության հանգամանքից: (տե՛ս Աղյուսակ 1, 2):

Աղյուսակ 1. Դիտարկված տեղամասերի մասնակցություն ըստ ժամերի

տեղամաս	9:00	10:00	11:00	12:00	13:00	14:00	15:00	16:00	17:00	18:00	19:00	20:00	ընտրող	տոկոս
29/02	30	100	210	290	415	561	657	757	891			1055	1925	54.8%
29/08	43	64	105		420	610			975	1039	1082	1111	1959	56.7%
29/13	126	250	360	580	580	950	1052	1080	1114	1135	1168	1190	950	125.3%
29/14	46	118	186	310	462	605	717	810	845	902	943	974	1895	51.4%
29/18	25	56	130	247	357	480	515	645	682	720	728	755	1205	62.7%
29/21			219			532		830	969	1000	1040	1047	1532	68.3%
29/25	30	168	246	346	555	713	764		905	972	982	1004	1666	60.3%
29/27	12	63	190	300	550	710		995	1060	1100	1120	1126	1610	69.9%
29/28	17	89	222	366	612	798	980	1063	1184	1230	1267	1280	1918	66.7%
29/29	30	87	245	435	660	784		1074	1157	1200	1241	1247	1751	71.2%
29/34	15	38	115	220	423	560	605	680	790	840	873	866	1218	71.1%
29/36	23	61	119	159	395	430	580	630	678	707	740	759	1126	67.4%
29/41	12	54	140	250	400	480	520	680	890	1022	1082	1091	1729	63.1%
29/46	15	94	210	350	550	683	823	900	1020	1080	1125	1133	1596	71.0%
30/02	19	58	153	216	400	515	594	666	706	747	793	826	1591	51.9%
30/09	70	150	211		450	580		800	860	930	935	958	1676	57.2%
30/20			193			515			860		900	971	1864	52.1%
30/23	6	110	190	200	288	530		703	800	830	850	827	1576	52.5%
30/29	30	118	208	290	480	623	703	776	910	962	1021	1047	1873	55.9%
30/32	30	70	163	200	480	648	687	738	818	878	900	998	1715	58.2%
30/34	27	110	214	336	431	538	612	696	775	840	926	942	1682	56.0%
30/35	46	115	210	350	460	580	650	720	785	830	867	877	1695	51.7%
31/01			237			655			857			992	1889	52.5%
31/03	53	115	195	297	490	521	590	650	691	719	738	772	1502	51.4%
31/16	78	140	161	200		268		316	325	338	347	347	307	113.0%
31/18	22	52	110	200	280	380	450	500	547	585	612	612	846	72.3%
31/25	149		435				1180		1310		1430	1434	1757	81.6%
31/54	10	19	24	60	85	105	115	133	143	162	176	179	289	61.9%
32/14	8	67	301			605			766			1035	1818	56.9%
32/18	23	55	235	280	380	495	680	770	823	902	910	915	1168	78.3%
32/30	64	126	228	313	394	470	520	635	677	727	732	734	896	81.9%
32/54	44	94	194	349	521	718	820	1015	1099	1159	1171	1175	1519	77.4%
32/56	13	59	152	239	323	460	553	611	662	678	720	725	925	78.4%
32/64	22	40	90	215	315	450	500	572	629	687	746	785	1531	51.3%
40/33	80	125	235	340	455	700	808	980	1163	1204	1251	1282	1638	78.3%
40/36	15	40	90	145	192	247	271	286	295	302	306	312	358	87.2%
40/39	40	95	204	340	470	630	780	897	1015	1103	1220	1256	1802	69.7%
40/40	19	64	180	330	432	580	698	854	942	1026	1104	1141	1467	77.8%
40/42	50	110	210	356	430	600	660	748	860	950	980	994	1371	72.5%
40/43	10	40	100	185	310	450	521	562	620	750	814	870	1178	73.9%
41/03	45	120	205	304	459	600	704	780	881	992	1062	1085	1935	56.1%
41/04	31	72	145	259	320	400	564	623	730	862	900	947	1890	50.1%
41/06	40	82	114	235	327	464	600	775	826	886	915	956	1764	54.2%
41/09	20	51	92	180	260	353	422	522	640	706	760	804	1634	49.2%
41/12	8	24	84	180	305	414	530	590	689	755	789	824	1393	59.2%
41/19	7	32	95	225	405	532	620	715	801	862	901	926	1275	72.6%
41/23	47	151	225	420	550	761	820	899	1000	1190	1265	1283	1828	70.2%
41/24	70	150	260	400	600	750	860	1042	1070	1200	1225	1246	1841	67.7%
41/26	70	155	280	440	680	768	900	1025	1103	1208	1253	1289	1987	64.9%
41/27	44	110	220	430	580	700	820	900	1000	1100	1220	1241	1844	67.3%
Ընդ												48245	75404	64.0%

Աղյուսակ 2. Դիտարկված տեղամասերում 1 ր քվեարկող անձանց թիվը ըստ ժամերի

տեղամաս	ընդհանուր մասնակից	9:00	10:00	11:00	12:00	13:00	14:00	15:00	16:00	17:00	18:00	19:00	20:00	ընտրող	տոկոս
29/02	1055	0.50	1.17	1.83	1.33	2.08	2.43	1.60	1.67	2.23			0.91	1925	54.8%
29/08	1111	0.72	0.35	0.68		2.63	3.17			2.03	1.07	0.72	0.48	1959	56.7%
29/13	1190	2.10	2.07	1.83	3.67		3.08	1.70	0.47	0.57	0.35	0.55	0.37	950	125.3%
29/14	974	0.77	1.20	1.13	2.07	2.53	2.38	1.87	1.55	0.58	0.95	0.68	0.52	1895	51.4%
29/18	755	0.42	0.52	1.23	1.95	1.83	2.05	0.58	2.17	0.62	0.63	0.13	0.45	1205	62.7%
29/21	1047			3.65			1.74		2.48	2.32	0.52	0.67	0.12	1532	68.3%
29/25	1004	0.50	2.30	1.30	1.67	3.48	2.63	0.85		0.31	1.12	0.17	0.37	1666	60.3%
29/27	1126	0.20	0.85	2.12	1.83	4.17	2.67		2.38	1.08	0.67	0.33	0.10	1610	69.9%
29/28	1280	0.28	1.20	2.22	2.40	4.10	3.10	3.03	1.38	2.02	0.77	0.62	0.22	1918	66.7%
29/29	1247	0.50	0.95	2.63	3.17	3.75	2.07		2.42	1.38	0.72	0.68	0.10	1751	71.2%
29/34	866	0.25	0.38	1.28	1.75	3.38	2.28	0.75	1.25	1.83	0.83	0.55	-0.12	1218	71.1%
29/36	759	0.38	0.63	0.97	0.67	3.93	0.58	2.50	0.83	0.80	0.48	0.55	0.32	1126	67.4%
29/41	1091	0.20	0.70	1.43	1.83	2.50	1.33	0.67	2.67	3.50	2.20	1.00	0.15	1729	63.1%
29/46	1133	0.25	1.32	1.93	2.33	3.33	2.22	2.33	1.28	2.00	1.00	0.75	0.13	1596	71.0%
30/02	826	0.32	0.65	1.58	1.05	3.07	1.92	1.32	1.20	0.67	0.68	0.77	0.55	1591	51.9%
30/09	958	1.17	1.33	1.02		1.99	2.17		1.83	1.00	1.17	0.08	0.38	1676	57.2%
30/20	971			1.07			1.79			1.92		0.33	1.18	1864	52.1%
30/23	827	0.10	1.73	1.33	0.17	1.47	4.03		1.44	1.62	0.50	0.33	-0.38	1576	52.5%
30/29	1047	0.50	1.47	1.50	1.37	3.17	2.38	1.33	1.22	2.23	0.87	0.98	0.43	1873	55.9%
30/32	998	0.50	0.67	1.55	0.62	4.67	2.80	0.65	0.85	1.33	1.00	0.37	1.63	1715	58.2%
30/34	942	0.45	1.38	1.73	2.03	1.58	1.78	1.23	1.40	1.32	1.08	1.43	0.27	1682	56.0%
30/35	877	0.77	1.15	1.58	2.33	1.83	2.00	1.17	1.17	1.08	0.75	0.62	0.17	1695	51.7%
31/01	992			1.32			2.32			1.12			0.75	1889	52.5%
31/03	772	0.88	1.03	1.33	1.70	3.22	0.52	1.15	1.00	0.68	0.47	0.32	0.57	1502	51.4%
31/16	347	1.30	1.03	0.35	0.65		0.57		0.40	0.15	0.18	0.15	0.00	307	113.0%
31/18	612	0.37	0.50	0.97	1.50	1.33	1.67	1.17	0.83	0.78	0.63	0.45	0.00	846	72.3%
31/25	1434	2.48		2.38				3.10		1.08		1.00	0.07	1757	81.6%
31/54	179	0.17	0.15	0.08	0.60	0.42	0.33	0.17	0.30	0.17	0.32	0.23	0.05	289	61.9%
32/14	1035	0.13	0.98	3.90			1.69			0.89			1.49	1818	56.9%
32/18	915	0.38	0.53	3.00	0.75	1.21	1.92	3.08	1.50	0.88	1.32	0.13	0.08	1168	78.3%
32/30	734	1.07	1.03	1.70	1.42	1.35	1.27	0.83	1.92	0.70	0.83	0.08	0.03	896	81.9%
32/54	1175	0.73	0.83	1.67	2.58	2.87	3.28	1.70	3.25	1.40	1.00	0.20	0.07	1519	77.4%
32/56	725	0.22	0.77	1.55	1.45	1.40	2.28	1.55	0.97	0.85	0.27	0.70	0.08	925	78.4%
32/64	785	0.37	0.30	0.83	2.08	1.67	2.25	0.83	1.20	0.95	0.97	0.98	0.65	1531	51.3%
40/33	1282	1.33	0.75	1.83	1.75	1.92	4.08	1.80	2.87	3.05	0.68	0.78	0.52	1638	78.3%
40/36	312	0.25	0.42	0.83	0.92	0.78	0.92	0.40	0.25	0.15	0.12	0.07	0.10	358	87.2%
40/39	1256	0.67	0.92	1.82	2.27	2.17	2.67	2.50	1.95	1.97	1.47	1.95	0.60	1802	69.7%
40/40	1141	0.32	0.75	1.93	2.50	1.70	2.47	1.97	2.60	1.47	1.40	1.30	0.62	1467	77.8%
40/42	994	0.83	1.00	1.67	2.43	1.23	2.83	1.00	1.47	1.87	1.50	0.50	0.23	1371	72.5%
40/43	870	0.17	0.50	1.00	1.42	2.08	2.33	1.18	0.68	0.97	2.17	1.07	0.93	1178	73.9%
41/03	1085	0.75	1.25	1.42	1.65	2.58	2.35	1.73	1.27	1.68	1.85	1.17	0.38	1935	56.1%
41/04	947	0.52	0.68	1.22	1.90	1.02	1.33	2.73	0.98	1.78	2.20	0.63	0.78	1890	50.1%
41/06	956	0.67	0.70	0.53	2.02	1.53	2.28	2.27	2.92	0.85	1.00	0.48	0.68	1764	54.2%
41/09	804	0.33	0.52	0.68	1.47	1.33	1.55	1.15	1.67	1.97	1.10	0.90	0.73	1634	49.2%
41/12	824	0.13	0.27	1.00	1.60	2.08	1.82	1.93	1.00	1.65	1.10	0.57	0.58	1393	59.2%
41/19	926	0.12	0.42	1.05	2.17	3.00	2.12	1.47	1.58	1.43	1.02	0.65	0.42	1275	72.6%
41/23	1283	0.78	1.73	1.23	3.25	2.17	3.52	0.98	1.32	1.68	3.17	1.25	0.30	1828	70.2%
41/24	1246	1.17	1.33	1.83	2.33	3.33	2.50	1.83	3.03	0.47	2.17	0.42	0.35	1841	67.7%
41/26	1289	1.17	1.42	2.08	2.67	4.00	1.47	2.20	2.08	1.30	1.75	0.75	0.60	1987	64.9%
41/27	1241	0.73	1.10	1.83	3.50	2.50	2.00	2.00	1.33	1.67	1.67	2.00	0.35	1844	67.3%
Ընդհանուր	48245													75404	64.0%

Ձայների հաշվարկի գործընթացի դիտարկում

Դիտարկված տեղամասերում ձայների հաշվարկը հիմնականում ընթացել է ըստ սահմանված կարգի: Քվեների ամփոփման գործընթացը ընդմիջումից հետո է մեկնարկել դիտարկված տեղամասերից երկուսում (31/07, 31/16):

Դիտարկված տեղամասերից երկուսում քվեաթերթիկների հաշվարկն ընթացել է սահմանված կարգի խախտումներով (29/34, 31/07): Լրացված քվեաթերթիկների վավեր կամ անվավեր ճանաչելու գործընթացում կողմնապահություն նկատվել է դիտարկված տեղամասերից մեկում:

Քվեատուփից դուրս բերված դատարկ ծրարների թիվը



Դիտարկված տեղամասերից 9-ում ձայների հաշվարկի ժամանակ հայտնաբերվել են դատարկ ծրարներ, ինչը ամենայն հավանականությամբ կարուսելի կիրառման հետևանք է:

Ձայների հաշվարկի վերաբերյալ լրացուցիչ դիտարկումներ

Թիվ 29/34 տեղամասում գրանցվել է կոպիտ միջադեպ, երբ ձայների հաշվարկի ընթացքում քվեասենյակ է մտել համայնքի գյուղապետը, և ՀՔԱ Վանաձորի գրասենյակի դիտորդի ուշադրությունը շեղելով, հանձնաժողովի առջևից վերցրել նախագահի թեկնածու Ռաֆֆի Հովհաննիսյան օգտին քվեարկած քվեաթերթիկների տրցակը և հեռացել տարածքից, մի քանի րոպե անց անծանոթ մի քաղաքացի մտել է քվեասենյակ և գրպանից քվեաթերթիկներ հանելով՝ փորձել դրանք դնել սեղանի վրա գտնվող մյուս քվեաթերթիկների հետ: Քվեաթերթիկների պակասելը նկատած հանձնաժողովի նախագահը պահանջել է, որ քվեաթերթիկները վերադարձվեն: Գյուղապետի հետ վիճաբանությունից հետո վերադարձվել են թվով 68 քվեաթերթիկ, որոնք բոլորն անվավեր էին դարձված: Դիտորդը պահանջել է, որ հանձնաժողովը արձանագրի խախտումը, սակայն հանձնաժողովը հրաժարվել է: Միջադեպը տեղի է ունեցել երեկոյան ժամը 23:00-ի սահմաններում:

Հարկ է նշել սակայն, որ քվեարկության արդյունքները զգալիորեն տարբերվել են դիտարկված և չդիտարկված տեղամասերում, ինչը հիմք է տալիս պնդելու, որ ընտրական գործընթացը և քվեարկության արդյունքները խեղաթյուրվել են Սերժ Սարգսյանի աջակիցների կողմից այն տեղամասերում որոնք զրկված են եղել անկախ վերահսկողությունից, ինչի հաշվին էլ կոմպենսացվել է դիտարկված տեղամասերում գրանցված անսպասելի ցածր ցուցանիշը:

Թիվ 29/41 տեղամասում եղել 6 չսահմանված նմուշի ծրար, իսկ թիվ 40/39 տեղամսաում, քվեատուփից դուրս է բերվել մեկ դատարկ ծրար, իսկ մեկ այլ ծրարում եղել է 2 քվեաթերթիկ, ինչն ամենայն հավանականությամբ վկայում է ընդհատված կարուսելի մասին:

Քվեարկության արդյունքների վերլուծություն

Քվեարկության արդյունքների ամփոփումից հետո մի շարք կառույցներ և փորձագետներ ներկայացրել են իրենց վերլուծություններն ըստ որոնց քվեարկության արդյունքները արհեստականորեն աղճատվել են և արժանահավատ չեն:[3]



ՀՔԱ Վանաձորի գրասենյակն իրականացրել է նմանատիպ վերլուծություն, որի ընթացքում ուսումնասիրել է տարբեր բնակավայրերում արձանագրված արդյուքները և առկա օրինաչափությունները, որոնք ներկայացվում են ստորև:

Ընդհանուր առմամբ գյուղական համայնքներում մասնակցությունը մոտ 13%-ով գերազացել է քաղաքային համայնքներում գրանցված մասնակցությանը, թեև բացարձակ տվյալներով, 912535 քաղաքացի քվեարկել է քաղաքային համայնքներում, և 608192 քաղաքացի քվեարկել է գյուղական համայնքներում: քաղաքային համայնքների քվեարկության արդյունքներով թեկնածուներից ոչ ոք չի հատել 50% սահմանը (տե՛ս Գծապատկեր Բ), մինչդեռ գյուղական համայնքների քվեարկության արդյունքներով ակնհայտ է ՀՀ նախագահի թեկնածու գործող նախագահ Սերժ Սարգսյանի առավելությունը (տե՛ս Գծապատկեր Գ): Ի դեպ

[3] Роман Удот, «Волшебник» по-армянски – «кахард», http://romanik.livejournal.com/718556.html
Андрей Бузин, «Армянские выборы в зеркале официальной статистики http://abuzin.livejournal.com/114160.html
Policy Forum Armenia, Policy Forum Armenia-ի փետրվարի 18-ի նախագահական ընտրությունների արդյունքների վերլուծությունը, http://pfarmenia.wordpress.com/2013/03/05/policy-forum-armenia-ի-փետրվարի-18-ի-նախագահական-ընտրութ
ԵԱՀԿ/ԺՀՄԻԳ, Ընտրությունների դիտորդական առաքելության վերջնական զեկույց http://www.osce.org/odihr/elections/101314

արդյունքների տարբերությունն ակնհայտ է Սերժ Սարգսյանի և Ռաֆֆի Հովհաննիսյանի դեպքում (մոտ 20%), մինչդեռ մյուս թեկնածուների ձայներում տարբերությունն աննշան է: Սերժ Սարգսյանի և Ռաֆֆի Հովհաննիսյանի ստացած ձայների այս տարբերությունը գյուղական և քաղաքային համայնքներում առնվազն կասկածելի է և ամենայն հավանականությամբ պայմանավորված է ոչ ընտրական իրավաչափ հանգամանքներով, գյուղական համայնքներում անկախ վերահսկողության սակավությամբ և ապացուցում է տարօրինակ ուղիղ համեմատական կապը մասնակցության և Սերժ Սարգսյանի օգտին տրված ձայների միջև:



Գծապատկեր Բ.ա. ՀՀ քաղաքային համայնքներում քվեարկության արդյունքների դինամիկան ըստ մասնակցության աճի





Գծապատկեր Գ.ա. ՀՀ գյուղական համայնքներում քվեարկության արդյունքների դինամիկան ըստ մասնակցության աճի



ՀՔԱ Վանաձորի գրասենյակը լրացուցիչ ուսումնասիրել է նաև գրասենյակի կողմից դիտարկած և չդիտարկած տեղամասերի արդյունքների տարբերությունները, ինչից ակնհայտ է դառնում, որ դիտարկված տեղամասերում արդյունքներն ակնհայտորեն տարբերվել են չդիտարկված տեղամասերից, ընդ որում այս դեպքում գյուղական և քաղաքային համայնքների և առանձին և համատեղ վերլուծությունն ակնհայտորեն խոսում է այն մասին, որ դիտորդական առաքելությունը կանխարգելիչ նշանակություն է ունեցել:

Գծապատկեր Դ.ՀՔԱ Վանաձորի գրասենյակի կողմից չդիտարկված տեղամասեր (գյուղական և քաղաքային համայնքներ, Լոռի և Տավուշ)



Գծապատկեր Ե.ՀՔԱ Վանաձորի գրասենյակի կողմից դիտարկված տեղամասեր (գյուղական և քաղաքային համայնքներ, Լոռի և Տավուշ)



Ընդհանուր առմամբ չդիտարկված տեղամասերում Սերժ Սարգսյանի արձանագրած արդյունքները 10 %-ով գերազանցել են իր իսկ արդյունքներին դիտարկված տեղամասերում (տե՛ս Գծապատկեր Դ, Ե), իսկ Ռաֆֆի Հովհաննիսյանի արձանագրած արդյունքները համապատասխանաբար 10 %-ով ավել են եղել դիտարկված տեղամասերում: Մյուս թեկնածուների արդյունքները այս դեպքում ևս էական տարբերություն չեն արձանագրել:

Լոռու և Տավուշի մարզի դիտարկված և չդիտարկված տեղամասերի առանձին վերլուծությունը ցույց է տալիս, որ և դիտարկված և չդիտարկված քաղաքային համայնքներում առավելությունը պատկանում է Ռաֆֆի Հովհաննիսյանին, ընդ

որում դիտարկված տեղամասերում Ռաֆֆի Հովհաննիսյանի առավելությունը չդիտարկված տեղամասերում իր ստացած քվեների նկատմամբ 5% է, համապատասխանաբար Սերժ Սարգսյանի ստացած քվեները 5 % -ով ավելի են դիտարկված տեղամասերում նրա ստացած քվեներից:

Գծապատկեր Զ. ՀՔԱ Վանաձորի գրասենյակի կողմից չդիտարկված քաղաքային տեղամասեր (Լոռի և Տավուշ)



Գծապատկեր Է. ՀՔԱ Վանաձորի գրասենյակի կողմից դիտարկված քաղաքային տեղամասեր (Լոռի և Տավուշ)



Լոռու և Տավուշի մարզի գյուղական համայնքներում գտնվող տեղամասերի արդյունքներով առավելությունը պատկանում է Սերժ Սարգսյանին, ընդ որում դիտարկած և չդիտարկած տեղամասերի արդյունքները տարբերվում են 10%-ով (տե՛ս Գծապատկեր Ը, Թ):

Գծապատկեր Ը. ՀՔԱ Վանաձորի գրասենյակի կողմից չդիտարկված գյուղական տեղամասեր (Լոռի և Տավուշ)



Գծապատկեր Թ. ՀՔԱ Վանաձորի գրասենյակի կողմից դիտարկված գյուղական տեղամասեր (Լոռի և Տավուշ)



Հետաքրքրական է նաև որ ՀՀ-ում գործող քրեակատարողական հիմնարկներն արձանագրել են ամենաբարձր մասնակցությունը և Սերժ Սարգսյանի օգտին քվեարկության ամենաբարձր արդյունքը (տե՛ս Գծապատկեր Ժ):

Գծապատկեր Ժ. ՔԿՀ-ներ ում քվեարկության արդյունքներ (մասն. 98,8 %)



ՀՀ Ոստիկանության կողմից պատրաստված վերջնական ընտրացուցակների և տեղամասերում փակցված հիմնական ընտրացուցակներում եղել են որոշ տարբերություններ: Այն տեղամասերում (թվով 61), որտեղ հիմնական ցուցակներում ընտրողների թիվը 100-ից ավելիով տարբերվում է ՀՀ Ոստիկանության կողմից հրապարակված ցուցակներում ներգրավված ընտրողների քանակից, ենթադրաբար քվեարկել են նաև զինծառայողներ: Այս տրամաբանությամբ ուսումնասիրված տեղամասերում արձանագրված արդյունքներն էականորեն տարբերվում են մյուս տեղամասերի արդյունքներից թե՛ մասնակցության, թե՛ քվեարկության արդյունքների առումով (տե՛ս Գծապատկեր ԺԱ):

Գծապատկեր ԺԱ. Տեղամասեր, որտեղ ենթադրաբար քվեարկել են նաև զինծառայողներ (մասն. 69,3%)



Գծապատկեր ԺԲ. Քաղաքային տեղամասեր, որտեղ ենթադրաբար քվեարկել են նաև զինծառայողներ (մասն. 65,2 %)



Գծապատկեր ԺԳ. Գյուղական համայնքներ, որտեղ ենթադրաբար քվեարկել են նաև զինծառայողներ (մասն. 78,7%)



Մասնակցության և երկու հիմնական թեկնածուների օգտին քվեարկության արդյունքների հարաբերակցությունը տարբեր տեղամասերում ամփոփ կերպով ներկայացված է ստորև (տե՛ս Գծապատկեր ԺԴ):

Գծապատկեր ԺԴ. Մասնակցության և քվեարկության հարաբերություն տարբեր տեղամասերում



Արձանագրված խախտումների առնչությամբ իրականացված գործողություններ

Երկարաժամկետ դիտորդության ընթացքում արձանագրված խախտումների առնչությամբ իրականացված գործողություններ

Չսահմանված վայրերում փակցված պաստառներ

- 2013թ. փետրվարի 12-ին կազմակերպության կողմից գրություն է ուղարկվել ՀՀ կենտրոնական ընտրական հանձնաժողով Դսեղ գյուղում առևտրի օբյեկտների վրա ՀՀ նախագահի թեկնածու Սերժ Սարգսյանի նախընտրական պաստառների փակցված լինելու վերաբերյալ, որով կազմակերպությունը խնդրել է ձեռնարկել համապատասխան միջոցառումներ խախտումը վերացնելու ուղղությամբ:

2013թ. փետրվարի 16-ին ստացվել է պատասխան գրություն ՀՀ կենտրոնական ընտրական հանձնաժողովից, այն մասին, որ իրենց կողմից զգուշացվել է համայնքի ղեկավարը և չսահմանված վայրերում փակցված պաստառները հանվել են:

- 2013թ. փետրվարի 15-ին կազմակերպության կողմից գրություն է ուղարկվել ՀՀ Կենտրոնական ընտրական հանձնաժողով, առ այն, որ Իջևան քաղաքում առևտրի օբյեկտների վրա փակցված են ՀՀ նախագահի թեկնածու Սերժ Սարգսյանի նախընտրական պաստառները:

Գրության վերաբերյալ պատասխան դեռևս չի ստացվել:

Ընտրակաշառքի դեպքեր

- Կազմակերպության երկարաժամկետ դիտորդության ընթացում ուսումնասիրությունների և քաղաքացիներից ստացված տեղեկությունների արդյունքում 2013 թվականի փետրվարի 15-ին կազմակերպության կողմից հանցագործության մասին հաղորդում է ներկայացվել այն մասին, որ ՀՀ գործող նախագահ, Հայաստանի Հանրապետական կուսակցության թեկնածու Սերժ Սարգսյանի համակիրների կողմից բաժանվում է քողարկված կամ ոչ քողարկված ընտրակաշառք:

2013թ. փետրվարի 18-ին ՀՀ ոստիկանության Լոռու մարզի քննչական բաժնից ստացվել են գրություններ, որով հայտնել են, որ կազմակերպության կողմից ներկայացված հաղորդման յուրաքանչյուր կետի վերաբերյալ նախապատրաստվել են նյութեր և խնդրել են տրամադրել, եթե առկա են հաղորդումը հիմնավորող նյութեր կամ փաստաթղթեր:

2013 թ. փետրվարի 20-ին կազմակերպության կողմից պատասխան գրություն է ուղարկվել ՀՀ ոստիկանության Լոռու մարզի քննչական բաժին, որ կազմակերպության հաղորդման համար հիմք են հանդիսացել կազմակերպության դիտորդների հայտնած

տեղեկությունները և հեռախոսազանգերի միջոցով ստացված տեղեկությունները: Ինչպես նաև տրամադրվել են կազմակերպությանը տեղեկություններ տրամադրած դիտորդների անուն ազգանունները, որոնցից քննիչը բացատրություններ է վերցրել իրենց կողմից տրամադված տեղեկությունների վերաբերյալ:

2013թ. փետրվարի 22-ին ՀՀ ոստիկանության Լոռու մարզի քննչական բաժնում կայացվել է քրեական գործի հարուցումը մերժելու մասին որոշում՝ հաղորդմամբ ներկայացված մեկ փաստի՝ «Հայաստանի էլեկտրական ցանցեր»-ի տնօրենի կողմից ընտրակաշառք բաժանելու վերաբերյալ՝ հանցագործության դեպքի բացակայության հիմքով:

2013թ. փետրվարի 22-ին ՀՀ ոստիկանության ՔԳՎ Լոռու մարզի քննչական բաժնի Գուգարքի բաժանմունքում կայացվել է որոշում քրեական գործի հարուցումը մերժելու մասին՝ կազմակերպության հաղորդման մեջ նշված (Վահագնի գյուղում ինչ-որ քաղաքացի հավաքել է գյուղացիների անձնագրային տվյալներ, որպեսզի մարզպետի միջամտությամբ լուծի իր տան հետ կապված խնդիրը) հանցագործության դեպքի բացակայության հիմքով:

Փետրվարի 28-ին ՀՀ Լոռու մարզի քննչական բաժնից ստացվել է քրեական գործի հարուցումը մերժելու մասին որոշում, News.am, Aravot.am, Galatv.am կայք-էջերում ինչպես նաև կազմակերպության կողմից ներկայացված հաղորդման կետերի վերաբերյալ նախապատրաստված նյութերով՝ հանցադեպի բացակայության հիմքով:

Կազմակերպության կողմից սույն թվականի մարտի 11-ին դիմում-բողոք է ուղարկվել ՀՀ Գլխավոր և Լոռու մարզի դատախազություններ քննիչի քրեական գործի հարուցումը մերժելու մասին վերացնելու և քրեական գործ հարուցելուն պարտավորեցնելու պահանջի մասին:

Վարչական ռեսուրսների օգտագործում

- ✧ 2013 թվականի փետրվարի 15-ին կազմակերպության կողմից հանցագործության մասին հաղորդում է ներկայացվել ՀՀ գլխավոր և Լոռու մարզի դատախազություններ, որով տվյալներ ենք հայտնել ՀՀ գործող նախագահ Ս. Սարգսյանի կողմից նախընտրական քարոզչություն իրականացնելիս վարչական ռեսուրս օգտագործելու մասին:

ՀՀ ոստիկանության Լոռու մարզի քննչական բաժնում կազմակերպության կողմից ներկայացված հաղորդման յուրաքանչյուր կետի վերաբերյալ նախապատրաստվել են նյութեր, որոնց վերաբերյալ ոստիկանության Լոռու մարզային վարչությունից 2013 թ. փետրվարի 20-ին ուղարկվել են գրություններ, որոնցով խնդրել են նյութերի լրիվությունն ու օբյեկտիվությունն ապահովելու նպատակով տրամադրել կազմակերպությունում առկա հիմք հանդիսացող փաստաթղթերն ու տրամադրել տեղեկությունները հայտնած անձանց տվյալները:

Ոստիկանության գրություններին ի պատասխան նույն օրը կազմակերպության կողմից տրամադրվել են տեղեկությունները կազմակերպությանը հայտնած դիտորդների

տվյալները, ինչպես նաև հայտնել ենք, որ խախտումների վերաբերյալ կազմակերպությունում փաստաթղթեր կամ նյութեր չկան:

2013թ. փետրվարի 24-ին ոստիկանության Լոռու մարզային վարչության Վանաձորի բաժնից ստացել ենք գրություններ, որոնցով հայտնել են, որ կազմակերպության կողմից ներկայացված հաղորդման հիման վրա նախապատրաստված նյութերը թողնվել են անհետևանք և համապատասխան եզրակացությամբ կցվել են քարտուղարության թղթապանակին, որը պատճառաբանվել է այն հանգամանքով, որ որևէ անձի արարքում իրավախախտման կամ հանցագործության հատկանիշներ չեն հայտնաբերվել: Կազմակերպության կողմից սույն թվականի մարտի 6-ին դիմում է ներկայացվել Լոռու մարզի դատախազություն պատճենը ՀՀ գլխավոր դատախազություն, որով խնդրել ենք պարտավորեցնել վարույթն իրականացնող մարմնին կազմակերպության կողմից ներկայացված հանցագործության մասին հաղորդմամբ ներկայացված խախտումների վերաբերյալ որոշում կայացնելու և այն կազմակերպությանը տրամադրելու մասին:

2013թ. մարտի 16-ին ՀՀ ոստիկանության Լոռու մարզային վարչության Վանաձորի բաժնում կայացվել են թվով 8 քրեական գործի հարուցումը մերժելու մասին որոշումներ՝ հանցագործության դեպքի բացակայության հիմքով և տրամադրվել են կազմակերպությանը:

Երկարաժամկետ դիտորդության դիտարկումների վերաբերյալ ներկայացված հաղորդման՝ «2013թ. փետրվարի 13-ին Վանաձորի պետական մանկավարժական ինստիտուտում Սերժ Սարգսյանին իրենց ձայնը տալու համար դասախոսների և ուսանողների շրջանում իրականացվել է քարոզչություն դասաժամին» կետի վերաբերյալ ՀՀ ոստիկանության Վանաձորի բաժնի հետաքննության բաժանմունքի պետ Ա. Սարգսյանի վարույթում նախապատրաստվել են նյութեր:

2013 թվականի փետրվարի 24-ին ՀՀ ոստիկանության Լոռու մարզային վարչության Վանաձորի բաժնից ստացվել է գրություն, որով հայտնել են, որ վերը նշված խախտման վերաբերյալ նախապատրաստված նյութերը թողնվել են անհետևանք և համապատասխան եզրակացությամբ կցվել քարտուղարության թղթապանակին, քանզի նյութերի նախապատրաստման ընթացքում կատարված աշխատանքներով և ձեռնարկված միջոցառումներով որևէ անձի արարքում իրավախախտման կամ հանցագործության հատկանիշներ չեն հայտնաբերվել:

2013 թվականի մարտի 6-ին կազմակերպությունը դիմում է ներկայացրել Լոռու մարզի դատախազ Կ. Շահբազյանին՝ ՀՀ ոստիկանության Լոռու մարզային վարչության Վանաձորի բաժնի պետ Է. Շարմազանովին քրեական դատավարության օրենսգրքի 181-րդ հոդվածի իմաստով որոշումներ կայացնելուն պարտավորեցնելու պահանջի մասին:

2013 թվականի մարտի 14-ին Լոռու մարզի դատախազության ավագ դատախազ Ա. Պողոսյանը որոշում է կայացրել նախապատրաստված նյութերով կայացված եզրակացությունը վերացնելու մասին:

2013 թվականի մարտի 16-ին ՀՀ ոստիկանության Վանաձորի բաժնի հետաքննության բաժանմունքի պետ Ա. Սարգսյանը, ուսումնասիրելով կազմակերպության կողմից Լոռու մարզի դատախազություն ուղարկված գրության վերաբերյալ նախապատրաստված նյութերը, կայացրել է քրեական գործի հարուցումը մերժելու մասին որոշում:

2013 թվականի մարտի 22-ին սույն որոշումը վերադասության կարգով բողոքարկվել է ՀՀ Լոռու մարզի դատախազ Կ. Շահբազյանին:

2013 թվականի մարտի 29-ին ՀՀ Լոռու մարզի դատախազության ավագ դատախազ Ա. Պողոսյանը, քննարկելով կազմակերպության նախագահ Ա. Սաքունցի դիմում-բողոքը, կայացրել է միջնորդությունը մերժելու մասին որոշում:

2013թ. ապրիլի 11-ին կազմակերպության կողմից դիմում է ներկայացվել ՀՀ Լոռու մարզի ընդհանուր իրավասության դատարան ՀՀ ոստիկանության Լոռու մարզային վարչության Վանաձորի բաժնի հետաքննության բաժանմունքի պետ Ա. Սարգսյանի քրեական գործի հարուցումը մերժելու մասին 16.03.2013թ. որոշումը վերացնելու և քրեական գործ հարուցելուն պարտավորեցնելու պահանջների մասին:

Ներկայացված դիմումի քննարկման ժամանակ կազմակերպության ներկայացուցչի կողմից դատարան ներկայացված պահանջում կատարել է փոփոխություն ձևակերպելով հետևյալ կերպ՝ «վերացնել ՀՀ ոստիկանության Լոռու մարզային վարչության Վանաձորի բաժնի հետաքննության բաժանմունքի պետ Ա. Սարգսյանի քրեական գործի հարուցումը մերժելու մասին 16.03.2013թ. որոշումը և պարտավորեցնել վերջինիս հարուցել վարչական վարույթ»: 2013թ. ապրիլի 29-ին ՀՀ Լոռու մարզի ընդհանուր իրավասության դատարանը կայացրել է կազմակերպության կողմից ներկայացված դիմումը մերժելու մասին որոշում:

2013թ. մայիսի 8-ին կազմակերպության կողմից ներկայացվել է վերաքննիչ բողոք Լոռու մարզի ընդհանուր իրավասության դատարանի որոշման դեմ:

Վերաքննիչ դատարանը բողոքն ընդունել է վարույթ և նշանակել է բողոքի քննության օր:

ՀՀ նախագահական ընտրությունների քվեարկության օրը հայտնաբերված խախտումների վերաբերյալ իրականացված գործողություններ:

Դիտորդական առաքելություն իրականացնելիս՝ կազմակերպության դիտորդների կողմից արձանագրված 61 խախտումներ վերացնելու նպատակով կազմակերպության կողմից պատրաստվել են թվով 7 գրություններ, որոնցից 4-ն ուղարկվել է ՀՀ ոստիկանություն՝ 3-ի պատճենը ՀՀ Կենտրոնական ընտրական հանձնաժողով, 2 գրություն ուղարկվել է ՀՀ Կենտրոնական ընտրական հանձնաժողով և 1 գրություն ուղարկվել է թիվ 29 ընտրատարածքային ընտրական հանձնաժողով:

Մասնավորապես՝

Կազմակերպության կողմից մեկ գրություն է ուղարկվել ՀՀ կենտրոնական ընտրական հանձնաժողով այն մասին, որ ընտրատեղամասում միաժամանակ գտնվել են Սերժ Սարգսյանի 2 վստահված անձ:

Թիվ 29/18, 29/27, 31/01, 30/20, 31/25 ընտրատեղամասերում հանձնաժողովի անդամները կազմակերպության դիտորդներին չեն տրամադրել տեղեկատվություն յուրաքանչյուր ժամը մեկ ընտրողների քանակի մասին: Կազմակերպության կողմից գրություն է ուղարկվել ՀՀ կենտրոնական ընտրական հանձնաժողով, որով խնդրել ենք ձեռնարկել համապատասխան միջոցառումներ կազմակերպության դիտորդների տեղեկատվություն ստանալու իրավունքի ապահովման ուղղությամբ:

Թիվ 29/21 ընտրատեղամասում Սերժ Սարգսյանի վստահված անձ Ավետիք Աբազյանը մոտեցել է քվեարկության եկած ընտրողներին մինչև քվեարկելը զրուցել նրանց հետ, այնուհետև քվեարկելուց հետո նորից մոտեցել է համազյուղացիներին, նորից զրուցել նրանց հետ: Ընտրողների հեռանալուց հետո վստահված անձն իր մոտ եղած ցուցակում, նշում է կատարել: Խախտումը վերացնելու վերաբերյալ կազմակերպության կողմից գրություն է ուղարկվել թիվ 29 ընտրատեղամասային ընտրական հանձնաժողով:

Թիվ 32/14 ընտրատեղամասում կազմակերպության դիտորդը արձանագրել է, որ հանձնաժողովի անդամները ստորագրում և անձնագրային տվյալներ են լրացնում ընտրողների ցուցակներում ընտրության չմասնակցած կամ քվեարկության չեկած քաղաքացիների անունների դիմաց: Կազմակերպության կողմից հաղորդում է ուղարկվել ՀՀ ոստիկանություն:

Կազմակերպության կողմից ընտրախախտումների վերաբերյալ կազմվել է 3 տեղեկանք ժամը 08:00-ից 12:00-ն, 12:00-ից 16:00-ն և 16:00-ից 20:00-ն ընկած ժամանակահատվածներում դիտորդների կողմից արձանագրված խախտումների վերաբերյալ: Տեղեկանքները տեղադրվել են կազմակերպության ինտերնետային էջում և տարածվել են լրատվական միջոցներով, ինչպես նաև կից գրություններով ուղարկվել են ՀՀ ոստիկանություն՝ ֆաքսի միջոցով, ինչպես նաև փորձել ենք ուղարկել ՀՀ կենտրոնական ընտրական հանձնաժողով, սակայն ֆաքսի ծանրաբեռնվածության պատճառով չի հաջողվել:

- Ոստիկանության Վանաձորի, Գուգարքի, Տաշիրի, Իջևանի բաժիններում, ինչպես նաև Լոռու մարզի և Գուգարքի քննչական բաժիններում կազմակերպության կողմից ուղարկված տեղեկանքներում նշված յուրաքանչյուր խախտման վերաբերյալ նախապատրաստվել են նյութեր, որի շրջանակներում փետրվարի 19-ին և 20-ին գրություններ են ուղարկվել կազմակերպություն, որոնցով խնդրել են նախապատրաստվող նյութերի լրիվությունը և բազմակողմանիությունն ապահովելու նպատակով ոստիկանությանը տրամադրել կազմակերպությունում առկա նյութեր կամ փաստաթղթեր և հայտնել տեղեկությունը տրամադրած անձանց տվյալները նրանցից բացատրություններ վերցնելու նպատակով:

2013 թ. փետրվարի 20-ին, 21-ին և 22-ին կազմակերպության կողմից պատասխան գրությունների միջոցով ոստիկանությանը տրամադրվել է կազմակերպության տնօրինման տակ գտնվող պահանջվող տեղեկատվությունը: Կազմակերպության դիտորդները, ովքեր արձանագրել են տեղեկանքում նշված խախտումները, մեծամասամբ բացատրություններ են տվել իրենց կողմից արձանագրված խախտումների շուրջ: Դիտորդների մի մասը հրաժարվել են բացատրություններ տալ, պատճառաբանելով, որ ցուցմունքներ կտան քրեական գործ հարուցելուց հետո:

Ոստիկանության Լոռու մարզային վարչության Վանաձորի բաժնից 2013 թվականի փետրվարի 21-ին և 24-ին ստացվել է 4 գրություն, որով հայտնել են, որ Ոստիկանության Վանաձորի բաժնում կազմակերպության կողմից արձանագրած խախտումների վերաբերյալ նախապատրաստված նյութերը թողնվել են անհետևանք, որևէ անձի արարքում իրավախախտման կամ հանցագործության հատկանիշներ չհայտնաբերվելու հիմքով: Սակայն ոստիկանության կողմից կազմակերպությանը չեն տրամադրվել համապատասխան որոշումներ:

2013թ. փետրվարի 22-ին ՀՀ ոստիկանության Լոռու մարզային վարչության Գուգարքի բաժնից 2013թ. փետրվարի 23-ին ստացվել է 3 գրություն, համաձայն որոնց թվով 3 ընտրատեղամասերում քվերակության օրը տեղի ունեցած խախտումների վերաբերյալ նախապատրաստված նյութերը թողնվել են անհետևանք՝ հանցագործության դեպքի բացակայության պատճառաբանությամբ և կցվել են քարտուղարության թղթապանակին:

- Քվերակության օրը ընտրախախտումների վերաբերյալ կազմակերպության տարածած տեղեկությունները իրենց մեջ պարունակել են Տավուշի մարզի ընտրատեղամասերում տեղի ունեցած խախտումների վերաբերյալ տեղեկություններ ՀՀ ոստիկանության Տավուշի մարզային վարչության Իջևանի բաժնից 22.02.2013թ. ստացվել է գրություն, որով հայտնել են, որ կազմակերպության կողմից տարածած տեղեկատվության հիման վրա կատարված խախտումների վերաբերյալ ստուգման արդյունքները եզրակացությամբ թողնվել են անհետևանք՝ անհիմն լինելու պատճառով:

- 2013թ. մարտի 14-ին ՀՀ Ոստիկանության Տավուշի մարզային վարչության Իջևանի բաժնից ստացվել է ընտրողներին ուղղորդելու և ընտրացուցակներում մահացած անձանց տվյալներ լինելու փաստի առթիվ նախապատրաստված

նյութերով քրեական գործի հարուցումը մերժելու մասին 2 որոշում, հանցադեպի բացակայության պատճառով:

2013թ. փետրվարի 18-ին կազմակերպության կողմից հանցագործության մասին հաղորդում է ներկայացվել ՀՀ ոստիկանության պետ Վ. Գասպարյանին այն մասին, որ թիվ 32/14 ընտրատեղամասում հանձնաժողովի անդամները ստորագրում և անձնագրային տվյալներ են լրացնում ընտրողների ցուցակներում ընտրության չմասնակցած կամ քվերակության չեկած քաղաքացիների անունների դիմաց:

2013 թ. փետրվարի 25-ին ՀՀ ոստիկանության Լոռու մարզային վարչության Տաշիրի բաժնից ստացվել է գրություն, որով հայտնել են, որ 2013թ. փետրվարի 18-ին կազմակերպության կողմից ՀՀ ոստիկանություն տված հաղորդման շուրջ ՀՀ ոստիկանության Տաշիրի բաժնում նախապատրաստված նյութերը թողնվել են անհետևանք: Գրությանը կցվել է 23.02.2013թ. կազմված եզրակացությունը, համաձայն որի նյութերի նախապատրաստման ընթացքում, պարզվել է, որ թիվ 32/14 ընտրատեղամասում նախագահական ընտրությունները անցել են օրենքով սահմանված կարգին համապատասխան և առանց ընտրական խախտումների:

2013թ. մարտի 6-ին կազմակերպության կողմից դիմում է ներկայացվել ՀՀ ոստիկանության Լոռու մարզային վարչության Տաշիրի բաժնի պետ Մ. Մարգարյանին, կազմակերպության կողմից ներկայացված հանցագործության մասին հաղորդման վերաբերյալ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 180-րդ հոդվածի իմաստով որոշում կայացնելու վերաբերյալ:

2013թ. մարտի 15-ին ՀՀ ոստիկանության Լոռու մարզային վարչության Տաշիրի բաժնից ստացվել է պատասխան գրություն, որով հայտնել են, որ թիվ 32/14 ընտրատեղամասում տեղի ունեցած ընտրախախտումների վերաբերյալ կազմակերպության կողմից ներկայացված հանցագործության մասին հաղորդման վերաբերյալ նախապատրաստված նյութերի ընթացքը լուծվել է ՀՀ գլխավոր դատախազի և ՀՀ ներքին գործերի նախարարի 1999 թվականի սեպտեմբերի 1-ի թիվ 12/354 հրամանի պահանջներին համաձայն, ըստ որի հանցագործության հատկանիշների բացակայության դեպքում նախապատրաստվող նյութերը գրավոր եզրակացության հիման վրա կցվում են թիվ 2 մատյանին առընթեր թղթապանակին:

2013թ. մարտի 28-ին կազմակերպության կողմից որոշում կայացնելուն պարտավորեցնելու մասին դիմում է ներկայացվել ՀՀ Լոռու մարզի դատախազ Հակոբ Ղարախանյանին, որը հիմնավորվել է այն հանգամանքով, որ ՀՀ քրեական դատավարության օրենսգիրքը հստակ սահմանում է, թե հանցագործության մասին հաղորդումների վերաբերյալ վարույթն իրականացնող մարմինը ինչ որոշում է պարտավոր կայացնել:

2013թ. ապրիլի 5-ին ՀՀ Լոռու մարզի դատախազության ավագ դատախազ Ա. Պողոսյանի կողմից կայացվել է միջնորդությունը բավարարելու, նյութերն անհետևանք թողնելու և քարտուղարության գործին կցելու վերաբերյալ եզրակացությունը վերացնելու մասին որոշում: Որոշումը պատճառաբանվել է այն հանգամանքով, որ եզրակացությունը ՀՀ քրեական դատավարության իմաստով որոշում չի հանդիսանում և հետևաբար չի կարող առաջացնել նույն դատավարական հետևանքները: Որոշման եզրափակիչ մասում Լոռու

մարզի դատախազության դատախազ Ա. Պողոսյանը լրացուցիչ նյութեր նախապատրաստելու և ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 181-րդ հոդվածի կարգով որոշում կայացնելու վերաբերյալ ցուցում է տվել:

ՀՀ ոստիկանության Լոռու մարզային վարչության Տաշիրի բաժնում, որոշումը ստանալուց հետո լրացուցիչ նյութեր են նախապատրաստվել, և 26.04.2013թ. կայացվել է քրեական գործի հարուցումը մերժելու մասին որոշում՝ հանցագործության դեպքի բացակայության հիմքով:

2013թ. մայիսի 13-ին կազմակերպության կողմից դիմում-բողոք է ներկայացվել ՀՀ Լոռու մարզի դատախազ Հ. Ղարախանյանին և ՀՀ գլխավոր դատախազ Ա. Հովսեփյանին, ՀՀ ոստիկանության Լոռու մարզային վարչության Տաշիրի բաժնի հետաքննության գծով տեսուչ Ա. Տոնոյանի 2013թ. ապրիլի 26-ի քրեական գործի հարուցումը մերժելու մասին որոշումը վերացնելու վերաբերյալ:

2013թ. մայիսի 29-ին ստացվել է ՀՀ Լոռու մարզի դատախազության ավագ դատախազ Գ. Գևորգյանի 2013թ. մայիսի 23-ի ՀՀ ոստիկանության Լոռու մարզային վարչության Տաշիրի բաժնի հետաքննության գծով տեսուչ Ա. Տոնոյանի 2013թ. ապրիլի 26-ի քրեական գործի հարուցումը մերժելու մասին որոշման դեմ բերված բողոքը մերժելու մասին որոշում:

2013թ. հունիսի 4-ին կազմակերպության կողմից դիմում է ներկայացվել ՀՀ Լոռու մարզի ընդհանուր իրավասության դատարան ՀՀ ոստիկանության Լոռու մարզային վարչության Տաշիրի բաժնի հետաքննության գծով տեսուչ Ա. Տոնոյանի 26.04.2013թ. քրեական գործի հարուցումը մերժելու մասին որոշումը վերացնելու պահանջի մասին:

- 2013թ. մարտի 15-ին ՀՀ ոստիկանության Վանաձորի բաժնի Բազումի բաժանմունքում կայացվել է քրեական գործի հարուցումը մերժելու մասին 2 որոշում՝ կազմակերպության դիտորդին հանձնաժողովի կողմից յուրաքանչյուր ժամը մեկ ընտրողների քանակի վերաբերյալ տեղեկատվություն չտրամադրելու վերաբերյալ՝ հանցադեպի բացակայության հիմքով:

- 2013թ. մարտի 16-ին ՀՀ ոստիկանության Վանաձորի բաժնում կայացվել է քրեական գործի հարուցումը մերժելու մասին որոշում՝ «բնակբաժնի պետը, ով եղել է Ս. Սարգսյանի վստահված անձը տեղամասում զանգահարել է ոմն մեկին և ասել, որ Մեքենան թող գնա կանգնի, որ անտեղի չսպասի, դե հմի չգիտեմ, դրանց հավաքի բեր» փաստի առիթով նախապատրաստված նյութերով՝ հանցագործության դեպքի բացակայության հիմքով:

- 2013թ. մարտի 16-ին ՀՀ ոստիկանության Վանաձորի բաժնում կայացվել է քրեական գործի հարուցումը մերժելու մասին որոշում՝ կազմակերպության ղեկավարի կողմից www.aravot.am լրատվական ծառայության ինտերնետային կայքէջին տված հարցազրույցում նշված տեղեկությունների վերաբերյալ, որտեղ կազմակերպության նախագահը նշել է, որ մարզերում արձանագրվում են ընտրակաշառքներ բաժանելու, ընտրողներին մասայաբար նույն մեքենաներով ընտրատեղամասեր բերման ենթարկելու դեպքեր վերաբերյալ

նախապատրաստված նյութերով՝ հանցագործության դեպքի բացակայության հիմքով:

- ✧ Քվեարկության օրը Ս. Սարգսյանի վստահված անձի կողմից ընտրողներին ուղորդելու վերաբերյալ կազմակերպության կողմից գրություն է ուղարկվել թիվ 29 ընտրատարածքային ընտրական հանձնաժողով:

- ✧ 2013թ. փետրվարի 21-ին թիվ 29 ընտրատարածքային ընտրական հանձնաժողում կազմակերպության կողմից ներկայացված գրության հիման վրա կայացել է նիստ և կայացվել է վարչական վարույթի հարուցումը մերժելու մասին որոշում, այն հիմնավորմամբ, որ տվյալ դեպքում կազմակերպությունը չի հանդիսանում տվյալ հարցով ընտրական հանձնաժողով դիմումներ ներկայացնելու իրավունք ունեցող սուբյեկտ, քանի որ չի խախտվել կազմակերպության սուբյեկտիվ ընտրական իրավունքը:

Ինչպես նշվեց վերևում կազմակրպության կողմից գրություններ է ուղարկվել նաև ՀՀ Կենտրոնական ընտրական հանձնաժողով, որից 2-ը ֆաքսի միջոցով է ուղարկվել, իսկ խախտումների վերաբերյալ կազմված տեղեկանքները ՀՀ Կենտրոնական ընտրական հանձնաժողովի ֆաքսի ծանրաբեռնվածության պատճառով անհնարին է դարձել ուղարկել և դրոնք ՀՀ ԿԸՀ են ուղարկվել փոստով՝ քվեարկության հաջորդ օր, սակայն դրանց վերաբերյալ որևէ պատասխան չի ստացվել: Ավելին, ՀՀ ԿԸՀ նախագահի կողմից հայտարարություն է արվել այն մասին, որ քվեարկության օրը ՀՀ ԿԸՀ որևէ գրություն կամ բողոք չի ստացել:

Մեթոդաբանություն

Թե նախընտրական քարոզչության, թե ընտրությունների օրվա դիտորդության ընթացքում կիրառվել են կազմակերպության կողմից մշակված և 2012թ.-ի խորհրդարանական և ՏԻՄ ընտրությունների ժամանակ կիրառված դիտարկման քարտերը:

Երկարաժամկետ դիտորդությունն իրականացվել է 4 դիտարկման քարտերի միջոցով.

- Թեկնածուի ընտրողների հետ հանդիպման դիտարկման քարտ
- Թեկնածուի ընտրողների հետ հանդիպման ընթացքում հանդիպման մասնակիցների հետ հարցազրույցի հարցաշար
- Նախագահի թեկնածուի հետ հարցազրույցի հարցաշար
- Նախընտրական շտաբների ղեկավարների հետ հարցազրույցի հարցաշար

Կարճաժամկետ դիտորդությունն իրականաացվել է 3 դիտարկման քարտերի միջոցով.

- Քվեարկության օրը ընտրատեղամասի ներսում դիտարկման քարտ
- Քվեարկության օրը ընտրատեղամասի շրջակայքի դիտարկման քարտ
- Ձայների հաշվարկի դիտարկման քարտ

Կարճաժամկետ դիտորդություն իրականացնելու համար ընտրվել են 70 քաղաքացի, որոնցից 20 դիտորդի որակավորում չունեին: Վերջիններիս ցուցակները ուղարկվել են կենտրոնական ընտրական հանձնաժողով որակավորման ստուգարք կազմակերպելու նպատակով: Նախապես ծրագրով պլանավորված էր դիտորդական առաքելություն իրականացնել 60 դիտորդների մասնակցությամբ, ծրագրի կայունությունը ապահովելու համար նախնական 70 դիտորդ է ներգրավվել՝ ապահովելու համար ծրագրի կայունությունը, որոնցից 5-ը հետագայում հրաժարվել են մասնակցել ծրագրին: Այսպիսով երկարաժամկետ դիտորդություն են իրականացրել 11, իսկ կարճաժամկետ դիտորդություն 66 դիտորդ: Վերոնշյալ դիտարկման քարտերի միջոցով տեղեկատվություն է հավաքագրվել քվեարկության գործընթացի ամբողջ ընթացքի վերաբերյալ՝ ժամը 7:00-ից մինչև քվեարկության ավարտը և ամփոփիչ արձանագրության կազմման պահը: Դիտարկվել է ընտրությունների նախապատրաստման գործընթացը՝ տեղամասային հանձնաժողովի նիստի ընթացքը մինչև քվեարկության համար տեղամասի բացումը, բուն քվեարկության ընթացքը մինչև 20:00 և քվեարկության արդյունքների ամփոփումը:

2013 թ. փետրվարի 18-ին ՀՀ նախագահի ընտրությունների քվեարկության օրը ՀՔԱ Վանաձորի գրասենյակը մշտական դիտորդություն է իրականացրել Լոռու և Տավուշի մարզերի թվով 50 ընտրատեղամասերում և 16 շրջիկ դիտորդների միջոցով այցելություններ է կատարել մոտ 20 այլ ընտրատեղամասեր: Դիտարկումներն իրականացվել են ՀՀ ընտրական օրենսգրքով և ԵԱՀԿ չափորոշիչներին համապատասխան կազմված դիտարկման քարտերի միջոցով: Դիտարկման արդյունքների վերաբերյա քվեարկության ընթացքում կազմվել և հրապարակվել է 3 ընթացիկ հաշվետվություն՝ 8:00-12:00-ի, 12:00-16:00 և 16:00-20:00-ի վերաբերյալ: Ընտրախախտումների վերաբերյալ 7 գրություն է ուղարկվել և 1 բանավոր հաղորդում ՀՀ ոստիկանությանը:

«Հելսինկյան Քաղաքացիական Ասամբլեայի Վանաձորի գրասենյակ»

Տիգրան Մեծի 59, Վանաձոր, 2001,

Հայաստանի Հանրապետություն,

հեռ. **(+374 322) 4 22 68**; ֆաքս: **(+374 322) 4 12 36,**

Ինտերնետային կայքէջ: **www.hcav.am**, էլ. Փոստ: **hcav@hcav.am**